



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

The blue lodge of F. Masonry

ԿԱՊՈՅՏ ՕԹԵԱԿ

ՀԻՆ ԽՈՐՀՐԴԱԽՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԵՆ

ԱԶԱՏ ՈՐՄՆԱԴԻՐՆԵՐՈՒ
ՃՇԳՐԻՏ ՍԿԶԲՆԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ



ՍԿՈՎՏԱԿԱՆ ՄԱՍՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ
ԱՇՍԿԵՐՏ, ԸՆԿԵՐ ԵՒ ՎԱՐՊԵՏԻ
ԾԷՍԵՐ ՈՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Պատրաստում

Հ. Մ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԷ, 18րդ

Էտիմպուրկի Բարձր Օթեակէն վկայում եւ
Ֆրանսա-Հայաստան Օթեակին նախկին անդամ Ի Փարիզ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ

Որմնադրութիւնը ճանչցնել կը
նշանակէ զայն սիրցնել: Պաշտո-
նական ծիսակատարները որմնա-
դիրներ կը պատրաստեն: Ասոնք
ալ՝ իրենց կարգին՝ ընծայացու-
ներ:

II

245

1961, ՓԱՐԻԶ
5965 Ա. Ո. Թուական



245
286
245

ՀԻՆ ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ,
ԻՆՉՊԷՍ ԱԶԱՏ ՈՐՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ
ՃՇԳՐԻՏ ՍԿԶԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ



Երբ մէկը չգիտեր թէ՝ ո՞ւրկէ
կուգայ եւ ո՞ր դռնէն դուրս կ'ելնէ,
կ'անգիտանայ նաեւ թէ ո՞վ է եւ դէ-
պի ո՞ւր կ'երթայ:

Հնդկաստանէն է որ մեզ կուգայ իրական բարիքը,
որ է՝ ներընծայացում (initiation), եւ որ կը նշանակէ
մտնել ճշմարտութեան մէջ. ա՛ն է որ կը ստանձնէ
մարդկութեան պաշտպանութիւնը:

Ազատ Որմնադրութիւնը այդ հնագոյն ներընծայաց-
ման վերանորոգումն է: Կը կարծուի որ՝ ան մտած է
Կոլուաներու մէջ Դրուիդ. կոչուած կրօնականներու եւ
Սելդիք վարդապետականներու կողմէ: Այս վերջիններն
էին որ՝ Հիմնեցին Ալէգեայի Պիպրաքը ըստած դաւա-
նանքը որ յայտնի է Օթէօն անունով: Անոնք էին որ
գործեցին Կոլուաներու մէջ, ներմուծելով այնտեղ՝ Խ-
րենց ներընծայական հաւաքոյթներու հրաշալիքները:

Յուլիոս Կեսար հրահանգ տուած էր զանոնք բնաջն-
ջել ջարդով, Քրիստոսէ 54 տարի առաջ: Հազիւ սակա-
ւաթիւ խումբ մը անոնցմէ՝ կրցաւ ազատուիլ ջարդէն եւ
սսոնք էին որ՝ զաղտնի կերպով սկսան քարոզել եւ 16
դարու ընթացքին, տարածուեցաւ անոնց սկսած գործը՝
մինչեւ Աւստրի երեւումը որ կը նկատուի հին խորհրդ-
դաւոր վարդապետութիւններու վերանորոգիչը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՆԱԽՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Ինչպէս վերը քսինք, նախնական Հնդկաստան եղած
է անոնց սկզբնական հայրենիքը, Ինտրայի երեւումէն
շատ առաջ: Բայց Ինտրա էր որ անոր ձեւակերպում
տուաւ ոգեկոչելով Աստուծոյ Միութիւնը: Այդ վայր-

կեանքն բխեցաւ Մարդկային Միութեան դադափարը:

Մարդը, ինչպէս բոլոր կենդանական ընտանիքները, ունենալով մէկ հայր, կը կազմեն մէկ ցեղ: Այս ըմբռնումէն ծագում առաւ հաւասարութեան սկզբունքը որ յառաջ բերաւ, իր կարգին, տիեզերական եղբայրութեան եւ խօսքի ու գիրի ազատութեան հայեցակէտը:

Այս է առաջին բարոյական հիմունքը Ազատ Որմնադրութեան եւ մեկնակէտը՝ իր խորհուրդին:

Այդ է նախնադոյն սիւնը:

Դժբախտաբար իր այս քաղաքական կրթիչ հանդամանքը եւ յստակութիւնը փոխուեցան յետագային:

Ինտրա, Զարագուստրա, Պոլստա, ահա ասոնք են զլխաւոր ուսուցիչները զանազան հատուածներու որմնադիրներուն եւ բոլոր երկիրներու լուսամիտ զաւակներուն:

Եթէ Ինտրա կազմեց առաջին սիւնը Յ, երկրորդ սիւնը, Յ, Պոլստա է որ կանգնած է. իրմէ վերջ եթովպական մոգեր եւ եգիպտական քուրմեր կիրարկեցին զայն եւ մեղ փոխանցեցին անոր վարդապետութեան հիմունքը:

Աւելի ուշ կը գտնենք ուրիշ հոսանք մը որ կը միացնէ այդ երկու սիւնները:

Հակառակ մեր պրպտումներուն, չգտանք որ եւ է հիմնական ուսումնասիրութիւն, գրուած 1860 թուականէն առաջ:

Ոմանք՝ (Աստուաշնչական Որմնադիրներ) կը կարծեն թէ՝ Ազատ Որմնադրութիւնը իր հիմը կ'առնէ Սողոմոնի Տաճարէն եւ «չինոզ գործաւորներու» եղբայրակցութենէն: Ուրիշներ զայն կը նկատեն Միջին Դարու Տաճարական կոչուած որմնադիրներուն գործը:

Մէկդի թողունք Սողոմոնի Տաճարի եւ Խաչակրութեան շրջանի Տաճարականներու առասպելական բնոյթը, եւ փնտռենք աւելի ճշգրիտ աղբիւրներ: Ասոնց մէջ կը հանդիպինք նաեւ ուրիշ կարծիքներու, եւ սա՝ ամէնէն հաւանականը կը նկատուի, բայց կէս ճամբէն սկսուած, թէ՝ եգիպտական եւ յունական վարդապետութիւններէն գոյութիւն առած է ան:

Վերջապէս կան ուրիշներ՝ որոնք կը կարծեն թէ՝ միայն Պրահմանականութիւնը եղած է անոր ծնունդ տըւողը: Այդ ալ ճիշդ չի կրնար ըլլալ, քանի որ Ազատ Որմնադրութիւնը, որ լնկերական միացման կապ մ'է, ոչ մէկ յարաբերութիւն ունի տարբադադրիչ եւ հակադրական կերական դրութեան մը հետ:

Հեղինակ մը, 1848ին հրատարակած իր գրքին մէջ, կ'ըսէ թէ՝ «Ազատ Որմնադրութիւնը արդիւնք է այն գոյամարտին որ յառաջ կուղայ Զարին դէմ եղած Ատելութեան՝ եւ Բարւոյն դէմ եղած Սիրոյ բաղխումէն:

Այս բացատրութիւնը որքան որ ճիշդ ըլլայ, կը նմանի աղուէսի եւ խաղողի առակին եւ պէտք եղած կերպով չի բացատրեր Ազատ Որմնադրութեան գոյութիւնը եւ յեղաշրջումը:

Կր պակսին թուականներ եւ պատմական իրողութիւններ:

Ասոր համար մեր այս գրուածքին վերնադիր տուինք Հին խորհրդաւոր վարդապետութիւններու, եւ Ազատ Որմնադրութեան ճշգրիտ սկզբնաւորութիւնը:

Պէտք է աւելցնել որ Ազատ Որմնադրութիւնը զաղանի ընկերակցութիւն մը չէ, այլ պատմական տեսակէտով, «ԴՐՐԸՆՓԱԿ է»: Ամէն ոք իրաւունք ունի մաս կազմելու, պայմանաւ որ ազատ եւ պատուաւոր անձ մը ըլլալը հաստատուի: Ազատ Որմնադրութեան մաս կը կազմեն նաեւ լուսաւորչական, օրթոտօքս, բողոքական բարձր աստիճանի կրօնականներ, ինչ որ կը հաստատէ որ՝ Աստուած ուրացուած չէ:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

1. - Առաջին աստիճանի մէջ բարոյականի ուսում:
2. - Բացատրութիւն խորհրդանիշներու:
3. - Անցք՝ բարբարոսութենէ դէպի քաղաքակրթութիւն:
4. - Պատմական առաջին մաս ներընծայացման:
5. - Նորամուտին կողմէ՝ հիացում եւ երախտագիտութիւն տիեզերքի Մեծ ճարտարապետին հանդէպ:



6. - Ինքնաճանաչման եւ իր նմաններուն հանդէպ ունեցած պարտականութիւններու մասին հմտութիւն:
7. - Ճանաչում Ազատ Որմնադրութեան հիմնական սկզբունքներուն, իր օրէնքներուն եւ սովորութիւններուն:
8. - Մղում նորամուտին՝ դէպի մարդասիրութիւն, առաքելութիւն եւ զարգացում:

ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԲԱՌԱՅՈՒՑԱԿ

Գերյարգելի վարպետ.
Աւագ եւ կրտսեր վերահսկիչներ.
Տրիրուն.
Գործակից.
Քարտուղար.
Գանձապետ.
Աւագ եւ կրտսեր սարկաւազներ.
Արարողապետ.
Տաճարի ճարտարապետ.
Ներքին պահապան.
Դռնապան:

ԿԱՐԳԱՑՈՅՑ ՍԿՍՆԱԿԻ ԱՍՏԻՃԱՆԻՆ

Ազատ Որմնադրութիւնը ճանցցնել կը նշանակէ գայն սիրցնել: Պաշտօնական ծիսակատարները որմնադիրներ կը պատրաստեն: Առնմալ իրենց կարգին՝ ընծայացուներ:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ազատ Որմնադրութիւնը տիեզերական եղբայրութիւն մըն է որ իւրաքանչիւր երկրի մէջ պատշաճեցուցուած է այդ երկրի օրէնքներուն:

Ամէն մէկ երկրի եւ ամէն մէկ տեղական Հաւաքարանի (լօժ, օթեակ) ընտրանիէն կազմուած մտերմական ընկերութիւն մըն է, որուն վարդապետութեան հիմունքը կը կազմեն Աստուծոյ եւ մարդկանց Սէրը: Աստուած կը նկատուի տիեզերքի Մեծ Ճարտարապետը, եւ այդ անունով կը ճանչցուի: Իբրեւ օրէնք ունի բնական կրօնքը եւ տիեզերական բարոյականը:

Իր մղիչ սկզբունքներն են ոյմարտութիւնը, լոյսը եւ ազատութիւնը:

Իր վարդապետութիւնն է հաւասարութիւն, եղբայրութիւն եւ բարեգործութիւն:

Իր բարոյական միջոցներն են համոզում եւ բարի օրինակ:

Իրմէ ստացուած պտուղներն են առաքինութիւն, ընկերակամութիւն եւ յառաջդիմութիւն:

Իր նպատակն է կատարելագործում եւ երջանկութիւն մարդկութեան զոր կ'ուզէ միացնել մէկ դրօշի տակ:

Ունի իր կեդրոնը եւ կայսրութիւնը՝ մարդկութեան սրտին մէջ:

Գաղտնի ընկերութիւն մը չէ ան ինչպէս կը կարծեն, բայց ընկերութիւն մը որ ունի իր դադանիքը:

Մեկնելով այս մեկնաբանութենէն, ճիշդ է որ ամէն մէկ հաւաքարան-օթեակ գործէ հեռատեսութեամբ եւ շատ խիստ լլայ չորամուտներու ընդունելութեան մէջ, որոնք հետզհետէ պիտի ծանօթանան մեր խորհուրդներուն. եւ ան հաւանութիւն պէտք է տայ միայն անոնց՝ որոնք կարող կը հանդիսանան հասկնալու Ազատ Որմնադրութեան սկզբունքները եւ պատրաստակամ կը գտնուին իր նպատակին կիրարկման մէջ իրենց աշխատութիւնը բերելու:

Ուրեմն օթեակները պարտաւոր են շատ զգուշութիւն ձեռք առնել նորամուտի մը ընդունելութեան համար: Որչափ ծանր է պատասխանատուութիւնը ընդհանուր հիմնարկութեան առաջ, քանի որ պիտի տրուի նոր անդամ մը՝ ընկերակցութեան, եւ եղբայր մը՝ արդէն ար-

Ճանադրուած ամէն մէկ անդամի: Որովհետեւ անգամ մը որ նորեկները ընդունուին, արդէն կը նկատուին եղբայր ամբողջութեան, հոգ չէ թէ ինչ կը ներկայացնեն անոնք եւ ինչ հանգամանքներ ունին:

Ուրեմն ամէն աշխատանքի շահը կը պահանջէ որ շատ խղճամիտ ըլլան իրենց ընտրութեան մէջ եւ պատիւ մըն է իրենց համար որ՝ արժանի ըլլայ նորեկը՝ ներկայացուելու, կազմակերպութեան բոլոր ճիշդաբանութեան մէջ:

Այդպէսով է որ մեր ընդհանուր հաստատութիւնը վտահօրէն պիտի կրնայ տարածել ընկերութեան մէջ իր բարեբար ազդեցութիւնը:

Նորընծայութեան յաջող բնոյթ մը եւ գործելու եղանակին մէջ միօրինակութիւն մը տալու մարմանով, կը մտածենք որ՝ լաւաւոյն է նորամուտները տեղեակ պահել գիտական միջոցներու եւ իրենց ընծայուելիք նըպաստներուն մասին, ուղղութիւն մը՝ որ մինչեւ հիմա չէ կիրարկուած:

Նախապատրաստական այս ուսուցումը զոր դիւրութեամբ կրնայ զարգացնել ամէն մէկ մտաւոր որմնագիր, գոհացում կրնայ տալ ամէն մէկ ներկայացողի եւ նորամուտին համար կ'ըլլայ բանալի մը՝ արդիւնաբեր կերպով ուսումնասիրելու եւ ստանց մեծ աշխատանքի՝ հասկնալու մեր խորհրդանիշերը:

Այդպէսով, ընդունելութիւնները դիւրաւ պիտի կրնան վերահասու ըլլալ այն կարեւորութեան որ կը տրուի անոնց:

Այստա Որմնադրութեան անունը կը ծառայէ քօղարկում մը ըլլալ կարգ մը աստիճաններու համար, որոնց սկզբունքները եւ նպատակը ոչինչ ունին հիմնական վարպետութեան հետ:

Երեսուն կարգերու վրայ երեք կարգեր կը ընտրուին. —

Ա.՝ կանոնական, իրեն խորհրդանիշ ունի Վարդ - Խաչը:

Բ.՝ փիլիսոփայական, որ կը ներկայանայ Քառոշ անունով եւ ունի 30րդ աստիճան:

Գ.՝ որ է ընդհանուր վերին հսկողի հանգամանք, ունի վերջին 33րդ աստիճանը:

Այս վերջինը վարչականէ զատ պատուակալ տիտղոս մըն է, որ Քատողին հետ, մաս կը կազմէ Սկովտիական կոչուած վարդապետական մեծ ընտանիքին:

Այս Սկովտիականը ճանչցուած է իբր ամենահին ձեռնարկը Այստ Որմնադրութեան մէջ, եւ կը պարունակէ շատ մը դրութիւններ իրար կապուած, որոնք նախնաձախնդրութեամբ կը պահուին:

Բայց պէտք է ընդունիլ որ՝ այն աստիճանները որոնք Վաղակաւոր անունով կը ներկայանան, որմնադիրներուն դէմ յարուցուին կարգ մը զրպարտութիւններ, արգելափակումներ, հալածանքներ: Մեր մեկնաբանութիւնները զանոնք կը ջնջեն:

Մեր օրերուն, Այստ Որմնադրութիւնը ամէն ժամանակ աւելի յարձակումի ենթակայ է: Երբեմն քառութեան նոխազ ընդունուած էին հրեաները իբրեւ պատասխանատու ժողովուրդներու բոլոր զանցառումներուն եւ կառավարութիւններու բոլոր սխալներուն, պատճառ բռնելով զանոնք այն բոլոր ոճրական արարքներուն որոնք խաղաղութեան եւ համերաշխութեան դէմ կը դործուէին:

Իր թշնամիները զայն կ'ամբաստանեն եւ անոնց կը վերադրեն ամէն տեսակ սեւհողի նպատակ: Չայն կը ներկայացնեն ամբոխներուն՝ իբրեւ վճռական թշնամիներ Քրիստոնէական քաղաքակրթութեան, եւ իբրեւ թէ՛ այս կրօնքը, պարագաները նկատի առնելով, չէ ստեղծուած հրեաներուն կողմէ եւ իբրեւ թէ Յիսուս հրեայ մը եղած չըլլար:

Չենք ուզեր հոս մտնել դաւանաբանական այս մանրամասնութիւններուն մէջ. որովհետեւ մոլեռանդ մտայնութիւնը մեզ պիտի նկատէ իբրեւ հակաքրիստոնէայ եւ մեզ պիտի ընդունի իբրեւ անբարոյականութեան գործադիր մը, որուն դեր տրուած է, թաքուն պետերու կողմէ, ընդլայնել ընկերական կազմին, բարոյականին եւ մարդկայնականութեան տարբազարդութիւնը:

Այդ կարգի մտածողներ, լրջօրէն կ'ընդունին որ՝

Հրեաներուն նման Ազատ Որմնադրութիւնն ալ հաւաքականութիւն մըն է, որ իրեն նպատակ դրած է վաղ կամ ուշ տիրապետել ամբողջ մարդկային ընկերութեան: Եւ այս շարժառիթով կը թափեն անոր գլխուն, առանց կշռելու խօսքը, ամէն տեսակ նախատինք. կ'ենթարկեն զայն ամէն հալածանքի. կը նղովեն զայն առաւելագոյն կամ նուազագոյն չափով, ըլլայ տղէտ ամբօխին կողմէ, ըլլայ որոշ ընտրանի դասակարգի մը կողմէ որ շատ լաւ գիտէ այդ հաստատութեան հիմնական արժէքը:

Համառօտ կերպով քննենք թէ ուրիշ՞ կողմայ այս տիեզերական խեցեվճիռին խոր շարժառիթը: Ինչո՞ւ Ազատ Որմնադրութիւնը յարձակուած եւ հալածուած է այսպէս, եւ որ միշտ պիտի մնայ այդ անիրաւ բամբասանքներուն ենթակայ դարեր շարունակ:

Պատասխանելով այս հարցին, կը տեսնենք երկու դըլխաւոր պատճառ:

Նախ որ՝ հակադրութիւնն է բոլոր ցեղապաշտութիւններու, որովհետեւ ան կենդանի խորհրդանիշն է Տիեզերական Եղբայրութեան: Յարակեաց դատապարտութիւնն է բոլոր կուսակցութիւններու քաղաքականութիւններուն եւ բոլոր նեղմիտ ազգայնականութեան ըմբռնումներուն: Ան կը կանգնի բռնապետական տեսակէտին դէմ իբրեւ մշտական եւ աներկբայ ամբաստանիչ մը: Բոլոր խափանարարութիւններուն դէմ, առանց խօսք մը ըսելու, առանց երեւցող կեցուածք մը ունենալու, ան կը թուի ըսել՝ ի՞նչ էրիք ազատութիւնը, արդարութիւնը, հաւասարակշռութիւնը:

Ճիշ՝ ադոր համար կ'ուզեն զայն շղթայակապել եւ աւելին՝ բնաջնջել զայն նկատելով խղճմտանքի դէմ ուրուական:

Երկրորդը՝ այն է որ ան ոչ ոքի համար կը հանդուրժէ տիեզերականութեան մենաշնորհը: Չ'ուզեր որ խմբաւորում մը, կուսակցութիւն մը, նոյնիսկ եկեղեցի մը չհաղորդեն տիեզերականութիւնը իրենց ըմբռնումներուն նեղ շրջապատին մէջ:

Ան կը դաւանի բոլոր մարդկութեան համար մէկ ի-



Ստոյնոնի Տաճարը Ի Երուսաղէմ
Զանազան ազգերու սպասկանող Ա. Որմնադրութիւնը

տէալ եւ իր խօսքն է միութիւնը՝ անհատներու, քաղաք-
ներու, ազգերու եւ ցեղերու միջեւ. ճիշդ ասոր համար
ամէն հորիզոնէ եկած յարձակումներուն թիրախն է :
Բոլոր շահագէտները, հեղինակաւոր դէմքերը, տեսա-
բանները, մասնաւորներու շահերու կողմնակիցները,
գասակարգային կռիւներ յարուցանողները, միակողմա-
նի յեղափոխութիւնները անոր դէմ գերք կը բռնեն :
Աջէն ու ձախէն, առաջէն ու քամակէն, ամէն կողմէ
կուգան հարուածներ :

Այդ արդա՞ր է թէ ոչ, չվիճինք այս մասին. այս բո-
լորը մարդկային է : Այս բացատրութիւնը բաւական է :
Բայց կայ եղած թշնամութեանց մէջ ուրիշ պատճառ մը
եւս, եւ ասիկա բուն իր մէջէն է ծագում առած :

Ան, երբեմն, հարեւանցի հաստատամտութեամբ եւ
աւելի, տգիտութեամբ, թուլութեամբ եւ թիւր հաշիւ-
ներով (քանի որ ան ալ վերջապէս կաղմուած է սխալա-
կան մարդերէ,) շեղեցաւ իր գոյութեան հիմնական տե-
սակէտէն, եւ առիթ տուաւ քննադատութիւններու :
Իջաւ կուսակցութիւններու կրկէսին մէջ, որով թերա-
ցաւ իր բուն դերին մէջ : Փոխանակ՝ մնալու իր հեղինա-
կութեան եւ իմաստութեան շրջապատին մէջ, ուղեց
մասնակցիլ, իբրեւ որմնադրական ոյժ, իշխանութեան
եւ քաղաքականութեան. նա ուրացաւ իր բնդհանրակա-
նութիւնը եւ նախընտրեց ըլլալ ծխական խեղճուկ հա-
ւաքականութեան մը զանգակի խորհրդանիշը, ըլլալով
հանդերձ մարդկութեան Տիեզերական խորհրդատեղին,
ուղեց մասնաւորներու շահերու նուիրում թաքուն
կրօնավայր մը ըլլալ : Պնակալիզութիւն ըրաւ օրուան
տիրող հսկաներուն, որպէս զի ինք ալ անոնց մէջ տեղ
ունենայ, առանց մտածելու թէ՝ անոնք որոնց կ'ուզէր
միանալ, հսկաներ էին, բայց կաւէ ոտքեր ունէին : Եւ
այդ հսկաներէն ոմանք տապալեցան, ինք ալ անոնց հետ
զգետնում մը ունեցաւ եւ իր միջոցները ստրկամիտ, օգ-
տապաշտ եւ հաշուական աշխատանքի մը յատկացուած,
ձեռնթափ եղաւ եւ անկարող եղաւ գործելու իրեն հե-
տապնդած բուն նպատակներուն գործադրութեան մէջ :

Ուրեմն Ազատ Որմնադրութիւնը իր իսկ տեսանկիւ

քնոյթով եւ իր իսկ մարդոց ըրած սխալներուն հետեւանքով, մեծ պատասխանատուութիւն ունի այն, յարձակումներուն մէջ, որոնց ենթարկուեցաւ:

Բայց դուք, ով ճշմարիտ Որմնադիրներ, որ կը գլխաւորէ ճշմարիտ ուղիին մէջ, մի ընկճուիք, կապուեցէք ամուր կերպով ձեր մաքուր տեսակէտներուն եւ մի յուսալքուիք:

Ազատ Որմնադրութեան հակառակորդները կը խորհին թէ զայն բնաջնջած են արդէն: Ազատ Որմնադիրներ կրնան անհատապէս կորսուիլ կամ մեռնիլ, բայց Ազատ Որմնադրութիւնը չի մեռնիր: Այսօր կը քննայ գերեզմանի տապանաքարին տակ: Բայց վաղը պիտի վերածնի աւելի ուժեղ եւ ամուր, որովհետեւ Ազատ Որմնադրութիւնը մարդկային հոգին իսկ է եւ սա՝ միշտ արբշիւ է ազատութեան, խաղաղութեան եւ սիրոյ գաղափարներով:



ՈՒԽՏԵԱԼ ՆՈՒԻՐՈՒՄ

Երբ անտեղեակ թեկնածուն կը մօտենայ Տաճարի դռան, խոնարհաբար Լոյս մը խնդրելու մտքով, սեմէն, դռնապահ, անոր ուսէն կը բռնէ ամուր կերպով, կը կեցնէ զայն եւ կը հարցնէ.

— Ո՞վ է:

Եւ հոգեմեքենան խնդրարկուին կողմէ կը պատասխանէ.

— Ազատ եւ լաւ բարքերով մարդ մըն է:

Ամէն ինչ այդ խօսքին մէջն է: Որմնադրութիւնը իրեն յարողները երկու խօսքով կը դնէ ամենաբարձր եւ ամենակատարեալ ճշմարտութեան առաջ: Իրապէս Լոյսը չտրուիր գերիներուն. զայն գէշ կերպով կրնային գործածել: Ան չի սփռուիր կրքոտ անհամաձայնութեան մէջ ուր կրնայ անմիջապէս մութի վերածուիլ: Ան կը յայտնուի իր ամբողջ յստակութեամբ, մարդկային յարաբերութիւններու պայծառութեան արդիւնք ներդաշնակութենէն:

Քանի՞ հատ են այսօր այն որմնադիրները որ կը խորհին այս արկու բառերուն վրայ. կամ շատ քիչ են, կամ բնաւ չկայ: Ուրեմն բանանք մեր միտքը ճշմարիտ Որմնադրութեան ցուցմունքներուն եւ խորհրդածենք անոնց վրայ անձնական առումով:

«Տաճարը բաց է միայն՝ ազատ եւ բարի վարքով մարդոց համար»:

Այս վարկածին երկու մասերը միեւնոյնն են: Անոնց յղացումները կը ներթափանցուին եւ կը տարածուին փոխադարձաբար: Ազատութիւնը իշխանութիւն մըն է, բարի վարուց արտայայտութիւնը կեց. անք մը կը նշանակէ, ինչ որ է իշխանութեան ցոլացումը: Բայց վարքը ոչինչ պիտի ըլլար եթէ ան չըլլար ուղղակի ճշմարիտ ազատութեան կերպանաւորումը:

Ազատ ըլլալ կը նշանակէ օրինասրբել պէտքերուն գոհացումը, զսպել բնազդները, ղեկավարել կիրքերը, ռոտահարել սխալը, կատարել բարին առաքինութեան մէջ, բնաջնջ ընելով Չարը եւ Մոլորթիւնը:



ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒՄ

Ծիսակատարումը միջոց մըն է որով մարդ ինք իր մէջ կ'ամփոփուի:

Ամէն մէկ աստիճանի ծիսակատարումը հաւաքոյթ մըն է արարողութիւններու, արարքներու, ընթացքներու եւ դնաքներու, իմաստալից եւ նուիրական բառերու որոնք կ'արտասանուին ըստ պատշաճի, նայած այն պարագաներուն եւ տեղերուն, ուր կը գտնուի ենթական:

Բացի աստիճաններու համար գործածուած բառերէն, օրինական վերին իշխանութիւնը որ կը վարէ Որմնադրութիւնը զանազան երկիրներու մէջ, ունի բառ մը յատկացուած արեւի երեւումի տարեկան ամէն մէկ փոփոխումին առթիւ եւ վեցամսեայ համար բառ մը արեւական ամէն մէկ հանդիսութեան համար:

Ծիսակատարը կը ներկայացնէ կերպը եւ եղանակը ամէն մէկ աստիճանի քացումին, տեղողութեան եւ լրու-

մին առթիւ եւ կուտայ անոնցմով հրահանգներ որոնք
կը կազմեն իր ազօթարանը:

Հին խորհուրդներու մէջ, աշխատանքները տեղի կ'ու-
նենային արեւամուտին եւ լիալուանի շրջաններուն:

Խորհրդապաշտական երեք աստիճաններու աշխա-
տանքները տեղի կ'ունենան օրուան վերջաւորութեան:
Բայց կրնային սկսիլ կէսօրին եւ անոնց վերջ տալ կէս
գիշերին: Այսպէս էր որ կը դործէին Ձարադուստրա եւ
իր աշակերտները:

Այս ձեւական դադաւարապաշտութիւնը առիթ կու-
տայ ներկայ հետեւորդներու քննելու Լոյսին եւ Խաւա-
րին զօրաւոր ազդեցութիւնը, այսինքն զիտնալու թէ
առաջինը՝ փիլիսոփայութիւնը եւ երկրորդը՝ նախա-
պաշարեալ տգիտութիւնը ի՞նչ ազդեցութիւն կը դործեն
ժողովուրդներու երջանկութեան եւ դժբաղդութեան
վրայ:

Սա ջշմարիտ է որ ծիսակատարումի նպատակն է՝
տալ մեծ ընտանիքի անդամներուն ինքզինք ճանչնալու
անսխալ միջոցները, մինչ այդ՝ միեւնոյն միջոցները
հօր արդեւք են ամէն նենդամտութեան, խաբէութեան
եւ հետաքրքրութենէ յառաջ եկած փորձութիւններու:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՀԵՏԱՄՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Դաստիարակը պէտք է որ, (մասնաւոր մուտքէ մը եթէ
կարելի է), բերուի իր տեղը՝ առաջնորդուած՝ իր նախա-
մատոյցէն, որ իր կարգին զայն կը յանձնէ դոնապահ
«եղբոր»: Այս վերջինը արտաքինապէս շատ խիստ,
կարճ կերպով եւ առանց սաստկութեան կը պատասխա-
նէ այն բոլոր հարցումներուն որոնք իրեն կ'ուղղուին:
Երբ աշխատանքի ժամանակը դեռ չէ սկսած, ան դադա-
ւի տեղ մը կը դրուի ուրիշ ոչ ոք կը տեսնէ եւ ոչ ոքի
հետ յարաբերութիւն կրնայ ունենալ: Բայց օթեակի
բացումէն քիչ առաջ, Գերյարգելիին արտօնութեամբ,
կը բերուի սենեակ կամ խորհրդածութեան եւ պատ-
րաստութեան աշխատավայր:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՅՐ

Ասիկա մութ խորշ մըն է, ուր դրսի լոյսը չի մտնէր
եւ լուսաւորուած է դամբանային լապտերով մը: Պա-
տերը սեւ ներկուած կը կրեն մահաատուեր խորհրդա-
նիշեր, եւ ատոնք են որ պաշտամունքի հետամուտ եղո-
ւր կը բերեն ինքնամփոփումի եւ խորհելու:

Հոն, ենթական առաջին ազդեցութիւնը կը կրէ որ
կուլայ երկրէն: Պէտք է որ հոն ինքզինք գտնէ իր վեր-
ջին կայանին մէջ որ կը յատկանշուի սեղանին վրայ
դրուած մեռեալի մը դանկով: Սա պատկերն է մարդ-
կային անախառութիւններու ոչնչութեան: Այս սենեակին
ամբողջ կահ կարասին կը բաղկանայ աթոռէ մը եւ սե-
ղանէ մը, որ ծածկուած է ճերմակ ծածկոյթով մը եւ
որուն վրայ ան թուղթ, թանազ, փռչի, գրիչ եւ կան-
թեղ:

Պատերուն վրայի արձանագրութիւնները հետեւեալ-
ներն են.

«Եթէ հետաքրքրութիւնը քեզ հոս բերաւ, կորսուէ
զմա:

«Եթէ կը վախճաս որ լուսաբանուին քու քերութիւն-
ներդ, մեր մէջ ինքզինքդ գէշ պիտի գտաս:

«Եթէ կարող ես կերպարանալիստումի, դողդողա,
դուն քափանցում պիտի կրես:

«Եթէ կը հաւատաս մարդկային այլազան դասերու,
դուրս ել, այստեղ այդպէս քան չես ճանչնար:

«Եթէ հոգիդ սարսուռ մը ունեցաւ, աւելի անդին մի
երթար:

«Եթէ յարատեւող ես, դու պիտի սրբագործուիս քեզ
վնասող տարրերէն, խաւարի քառսէն դուրս պիտի ել-
նես, պիտի տեսնես Լոյսը...»

Նորամուտին նախ ժամանակ կը տրուի իր խորհրդ-
դածութիւններու քննութիւնը կատարելու համար: յե-
տոյ թուղթ մը կուտան անոր՝ երեք հարցումներով: Այդ
հարցումները կրնան ըլլալ իր զբաղումին կամ ընկերու-
թեան մէջ ունեցած իր գիրքին, իր յարաբերութիւննե-
րուն մասին: Բայց կը տրուին նաեւ այսպիսի հարցում-

ներ.

— «Մարդ ի՞նչ կը պարտի Աստուծոյ :

— «Մարդ ի՞նչ կը պարտի իր անձին :

— «Մարդ ի՞նչ կը պարտի իր նմաններուն :»

Եւ պատասխանները կ'ըլլան.

«Սէր Աստուծոյ հանդէպ, Սէր իր անձին հանդէպ,
Սէր իր նմաններուն հանդէպ :»

Այն ատեն պատրաստիչ դռնապահ եղբայրը անոր
կ'ըսէ թէ՛

— Քանի որ շուտով նոր կեանքի մը մէջ պիտի մըտ-
նես, պարտաւոր ես կտակդ ընել եւ կնքել :

Թեկնածուն պիտի պատասխանէ շուտով, ինչպէս իր
միւս պատասխանները :

ՕԹԵԱԿԻՆ ԴԻՐՔՆ ՈՒ ՅԱՐԴԱԻՈՐՈՒՄԸ

Օթեակը պէտք է ներկուած ըլլայ կապոյտով եւ ճեր-
մակով, եթէ չի ներկայացներ ճարտարապետական կեղ-
րոնակարգ մը եւ չէ նկարուած գիտութեանց, արուեստ-
ներու, երկրադործութեան եւ նոյնիսկ պատերազմի
նուիրուած նկարներով : Բայց ամէն պարագայի մէջ,
առաստաղը պէտք է ըլլայ կամարածեւ երկնակապոյտ
եւ վրան աստղեր : Սկովտիական ծէսին մէջ կանաչ գոյ-
նը ընդունուած է :

Երեք լոյսեր կան. մին դէպի Արեւելք եւ դրուած սե-
նեակին հարաւային կողմը, երկրորդ դէպի Արեւմուտք՝
հիւսիս եւ հարաւի կողմերէն : Արեւմուտքի կողմը
պոսնոյէ երկու սիւներ կան մէջը պարապ, կորնթական
ոճ ունին անոնք : Անոնց իւրաքանչիւրին գլուխին վրայ
երեք բացուած նուրբ կան : Աջ կողմէ մուտքէն դէպի
ներս բացուած սիւնին բունին վրայ կայ B (պէ) տառը
եւ միւս սիւնին վրայ J (Ժի) : Սա է որ պիտի լոյս ստա-
նայ առաջին աստիճանի աշխատանքներու կատարուած
ատեն :

Սկովտիական ծէսին մէջ պէ տառը կրող սիւնը ձախ
կողմն է, իսկ Ժի կրող սիւնը աջ կողմը :

Տախտակամածը խճաքարէ է որուն վրայ, Տաճարին
մէջտեղը, քիչ մը դէպի Արեւելքի կողմը, հաւաքարա-
նին պատկերը կը ներկայացուի : Ամէն մէկ արարողու-
թեան ատեն կաւիճով մը կը դծեն զայն եւ արարողու-
թենէ վերջ զայն կ'աւրեն թեթեւ կերպով թրջուած
սպունդով մը :

Մասնաւորապէս եղած է այս կարգադրութիւնը որ-
պէս զի զեղծում չկատարուի ներկուած նկարի մը վրայ
պիղծ ձեռքերու կողմէ :

Այդ պատկերը պէտք է ներկայացնէ .

1. - Տաճարին եօթը աստիճանները եւ իր մեծ դրան
խճաքարով տախտակամածը .

2. - Երկու խորհրդաւոր սիւնները իրենց վերտառու-
թիւնով, երկու սիւններուն մէջ, դէպի անոնց վերեւի
բաժնին վրայ, բաց կարկին մը, երկու ծայրերը վեր
բարձրացած .

3. - Ժի վերտառութիւնը պարունակող սիւնին ձախ
կողմը անձեւ քար մը, պէ վերտառութիւնը կրող սիւնին
աջ կողմը, խորանարդ քար մը, մէկ անկիւնի վրայ կե-
ցած :

4. - Երկու սիւններուն բուններուն միջեւ, Տաճարին
դուռը, Ժի սիւնին խոյակին վրայ ուղղահայեաց գիծ
մը. պէ սիւնին վրայ մակարդակը .

5. - Պատկերին վրայ երեւցած վերին դրան մէջտեղը
ուղղանկիւն ձեռոց մը (կէօնիա) . անոր աջ կողմը, ա-
րեւը, ձախ կողմը լուսինը, պատկերին վրայ՝ տախ-
տակ մը, վրան դծելու համար .

6. - Օթեակին վերի մասը կը ներկայացնէ աստղա-
զարդ երկինք մը, որ չըջպատուած պէտք է ըլլայ ձե-
ռագործ ծոպերով .

7. - Վերջապէս պիտի դծեն երեք պատուհան, Ա.՝
դէպի Արեւելք, Բ.՝ դէպի Արեւմուտք, Գ.՝ մէջտեղը :

Արեւելեան կողմը կայ կերպասէ ամպշովանի մը ու-
կէճուրքով, որուն ներքեւ դահ մը՝ ուր կը բազմի նա-
խագահը : Անոր ետեւ կայ նուիրական եռանկիւնը : Գա-
հին առաջ կայ սեղան մը իբր խորան, կապոյտ դորդով
ծածկուած որուն վրայ դրուած են թակ մը, կարկին

մը, լուսաշող սուր մը, ընդհանուր կանոնադիրքը եւ երեք ճիւղերով աշտանակ մը: Գահը եւ սեղանը տախտակամածի մակարդակէն աւելի բարձր դիրքի վրայ են եւ երեք ոտքերով դատուած անկէ: Աջ կողմն է հաւաքարանին դռը: Սկզբնական ծէսին ամպստօններն եւ սեղանին դռը կարմիր են ոսկի ճուրջով եզերուած եւ կայ նաեւ Աստուածաշունչ մը:

Անկէ քիչ առաջ, դրուած է ուրիշ սեղան մը որ կը կոչուի երդման սեղան: Գահին ձախ կողմը, եռոտն բարձրաւանդակին վրայ, հարաւային կողմի սիւնին դիմաց կայ Տրիքունին դրասենեակը ուր կը պահուին կանոնադիրքը, աշխատանոցի օրինադիրքը եւ զանձապահին դրասենեակը: Հիւսիսի սիւնին դիմաց քարտուղարին սեղանն է եւ հիւրընկալին պաշտօնատունը: Արեւմտեան կողմը, այլ սիւնին մօտ կայ թիկնաթոռ մը՝ առաջին վերահսկիչին համար, իսկ ժի սիւնին դիմաց ուրիշ թիկնաթոռ մը՝ երկրորդ վերահսկիչին համար: Այս պաշտօնատարներուն սեղանին վրայ կայ թակ մը:

Սկզբնական ծէսին համար, Արեւմտեան կողմը, ժի սիւնին առաջ է որ կը դրուի առաջին վերահսկիչին թիկնաթոռը, եւ աւելի վար, դէպի արեւելեան կողմը, երկրորդ վերահսկիչին թիկնաթոռը:

ՊԱՇՏՈՆԱՍԱՐՆԵՐՈՒ ԶԱՐԴԱՐԱՆՔ ԵՒ ԳՈՀԱՐՆԵՐ

Պաշտօնատարները կը կրեն խաչաձեւուած եւ մոյգ կապոյտ ժապաւէնէ մը կախուած գոհարը:

Գերյարգելիին համար այդ գոհարը ուղղանկիւն ձեւոյ մըն է (կէօնիա): Առաջին վերահսկիչները հորիզոնաձեւ մակարդակ մը, իսկ Բ. վերահսկիչին ուղղահայեաց: Տրիքունները բաց դրքի մը ձեւը ունի, քարտուղարինը՝ երկու փետուրներ են խաչաձեւուած, արարողապետներ՝ սուր մը կը ներկայացնէ:

Գողնոցը, աշխատութեան խորհրդանշը, աւելի կարեւորութիւն կը ներկայացնէ քան ժապաւէնը: Անիկա որմնադրական ճիշդ զգեստն է, մինչ պատուանշան եւ ժապաւէն զարդեր են: Խորհրդաւոր հաւաքոյթներու

մէջ ուր կը սկսի որմնադրական աշխատանքը, անպատճառ պէտք է կրել գողնոցը:

Բոլոր եղբայրները սուրով մը զինուած են: Օթեակին մէջ լոյսերը ասող կը կոչուին. քովընտի նստարանները, ուր եղբայրները կը նստին, սիւններ կը կոչուին: Երկու շրջիկ նստարան կայ ոսկեղօծ բարձր աստիճանաւոր եւ յայտնի եղբայրներու ընդունելութեան յատկացուած:

Օթեակին մէջ չեն գրեր. կ'արձանագրեն տախտակի մը վրայ. թուղթը արձանագրութեան տախտակն է եւ գրիչը՝ մատիտ մը:

Տաճարը կը կոչուի օթեակ (լօթ) կամ աշխատանոց. որմնադիրներու հաւաքոյթն ալ այդպէս կը կոչուի ուրկէ կը կոչուի «Աշխատանք»: Լօթ մը ունի իր պաշտօնատարները զոր տեսանք աւելի առաջ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԿԶԻՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Երբ եղբայրները հաւաքուած են օթեակին մէջ եւ իրենց որմնադրական զգեստը հագած, նշանները կրած են, Գերյարգելին դահ կը բարձրանայ եւ իր սեղանին կը դարնէ հոն գտնուած թակով: Վերահսկիչները իրենց թակերով նոյնը կ'ընեն: Անմիջապէս լուծթիւն կը տրիքէ: Ամէն ոք իր տեղը ոտքի կը կանգնի: Գերյարգելին կը հարցնէ առաջին վերահսկիչին.

— Եղբայր առաջին վերահսկիչ, որմնադիր՞ը էք:

ՊԱՏ. — Իմ եղբայրներս զիս իբր այդ կը ճանչնան:

— Օթեակին մէջ վերահսկիչներուն պարտականութիւնը ի՞նչ է:

ՊԱՏ. — Ճշտելու համար թէ՛ Տաճարը ամբողջապէս փակ է եւ թէ՛ բոլոր եղբայրները որոնք սիւնները գրաւած են, որմնադիրներ են:

Առաջին վերահսկիչը կ'ըսէ Բ. վերահսկիչին.

— Բ. վերահսկիչ եղբայր, հաստատեցէք որ Տաճարը ամբողջապէս փակ է եւ ձեր բլիշին բոլոր եղբայրները որմնադիրներ են:

Երկրորդ վերահսկիչ եղբայրը կ'ըսէ.

— Իրաւասու եղբայր, ձեր պարտականութիւնը կատարեցէք:

11-245աի

Իրաւասու եղբայրը սուրը ձեռին դուրս կ'ելնէ եւ կը յանձնարարէ դռնապահ եղբոր որ լաւ հսկէ դաւիթին արտաքին բաժնի պաշտպանութեան: Այդ միջոցին վերահսկիչ եղբայրները կը շրջադային իրենց բջիջները, եթէ չեն կարող իրենց տեղէն պէտք եղած քննութիւնը կատարել:

Իրաւասու եղբայրը ներս կը մտնէ եւ շատ ցած ձայնով կը խօսի Բ. վերահսկիչին: Այս վերջինը կը հաւատարմացնէ Ա. վերահսկիչը թէ՛ Տաճարը արտաքնապէս եւ ներքնապէս պէտք եղած կերպով փակուած է եւ բոլոր բջիջներուն եղբայրները որմնադիր են:

Այն ատեն Գերյարգելին իր թակով կը դարնէ սեղանին եւ կ'ըսէ.

— Առաջին վերահսկիչ եղբայր, ի՞նչ է հսկիչներուն երկրորդ պարտականութիւնը:

ՊԱՏ. — Հաստատել թէ՛ բոլոր եղբայրները ի կարգի՞ն են:

— Իրենց տե՞ղն են:

Բ. վերահսկիչ եղբայրը կ'ըսէ Ա. վերահսկիչին.

— Իմ բջիջիս բոլոր եղբայրները ի կարգի են:

Առաջին վերահսկիչ եղբայրը կը դառնայ Գերյարգելին եւ կ'ըսէ.

— Գերյարգելի, ամէն մէկ սիւնի եղբայրները ի կարգի են:

ԳԵՐ. ԵՂԲԱՅՐԸ. — Առաջին վերահսկիչ եղբայր, որմնադիրները ո՞ր ժամուն կրնան սկսել իրենց աշխատանքներուն:

ՊԱՏ. — Կէսօրին, Գերյարգելի:

ՀԱՐՑ. — Ժամը քանի՞ն է, երկրորդ վերահսկիչ:

ՊԱՏ. — Կէսօր է, Գերյարգելի:

ԳԵՐՅԱՐԳԵԼԻՆ. — Քանի որ աշխատանքի սկզբնաւորութեան ժամն է, առաջին եւ երկրորդ վերահսկիչ եղբայրներ, հրաւիրեցէք ձեր սիւններուն եղբայրները որ ինձ մօտ դան, որպէս զի սկսինք յարգելի Բ., ... օթեակին աշխատանքներուն, յատկացուած Սկովտիական ծխակատարումի սկսնակի:

Ա. վերահսկիչ եղբայրը, Բ. վերահսկիչ եղբայրը՝

ներկաներուն.

— Հարաւային սիւնի եղբայրներ, Գերյարգելին մեզ կը հրաւիրէ որ իրեն միանանք աշխատանքի սկսելու համար:

Բ. վերահսկիչը կը հաղորդէ այդ յայտարարութիւնը իր բջիջին եւ կը տեղեկացնէ այդ մասին Ա. վերահսկիչը եւ կ'ըսէ անոր.

— Եղբայր Ա. վերահսկիչ, յայտարարութիւնը իմ բջիջիս տարուած է:

Ա. վերահսկիչը կ'ըսէ.

— Գերյարգելի, պէտք եղած յայտարարութիւնը եղած է երկու բջիջներուն:

Գերյարգելին իր պատուոյ սեղանին թակի երեք խորհրդաւոր հարուած կուտայ, զոր իրենց կարգին կը կրկնեն վերահսկիչները: Յետոյ Գերյարգելին կ'ըսէ.

— Դէպի ինձ, եղբայրներ:

Եւ ամենուն աչքը անոր կը յառի, տրուած նշանի մը վրայ, զանդակահարութեամբ եւ յարգանքի արտայայտութեամբ (զանդակահարութիւնը երեք հարուածներ են, որոնք պէտք չէ որ երեք անգամ կրկնուին: Շատ մը օթեակներու սովորութիւնը այս է):

ԳԵՐՅԱՐԳԵԼԻՆ. — Եղբայրներ, աշխատանքը սկսուած է, ձեր տեղերը դրաւեցէք:

Վերահսկիչները կը կրկնեն սոյն խօսքերը եւ իւրաքանչիւրը իր տեղը կը նստի:

ԳԵՐՅԱՐԳԵԼԻՆ. — Քարտուղար եղբայր, կ'ուզէ՞ք կարգաւ մեր վերջին նիստին տախտակը: Դուք ալ, Ա. եւ Բ. վերահսկիչ եղբայրներ, կոչ ըրէ՞ք մեր եղբայրներուն որ ուշադրութիւն ընեն այդ ընթերցումին: Քարտուղար եղբայր, խօսքը ձերն է:

Այդ հաշուետուութեան ընթերցումէն վերջ, Գերյարգելին կ'ըսէ Ա. եւ Բ. վերահսկիչ եղբայրներուն թէ՛ դիտողութիւն մը ունի՞նք վերջին նիստի հաշուետուութեան խմբագրութեան մասին: Իրենց խօսք պիտի տրուի: Վերահսկիչ եղբայրները կը հաղորդեն այդ՝ ներկայ եղբայրներուն: (Դիտողութիւնները կրնան ըլլալ միայն խմբագրական ձեւին համար, բայց ոչինչ կարելի

է փոխել պատճէնին մէջ, որ իր վերջնական ձեւին մէջ ընդունուած է արդէն անփոփոխելի ըլլալու պայմանով։)

Եթէ եղբայր մը ղիտողութիւն մը ունի, ոտքի կ'ելլէ, խօսք կ'ուզէ եւ իրեն խօսք տրուելէ վերջ, կը յայտնէ իր ղիտողութիւնները, առանց պնդելու թէ՛ ինք իրաւացի է եւ կը յայտնէ իր յարգանքը։

Եթէ ղիտողութիւն չկայ, Բ. վերահսկիչ եղբայրը կ'ըսէ։

— Ա. վերահսկիչ եղբայր, իմ բջիջէս ոչ մէկ ղիտողութիւն կայ։

Ա. վերահսկիչ եղբայրը իր կարգին Գերյարգելիին դառնալով։

— Գերյարգելի, երկու բջիջներէն ոչ մէկ եղբայր խօսք կ'ուզէ։

ԳԵՐՅԱՐԳԵԼԻՆ. — Տրիբուն եղբայր, յայտնեցէք ձեր եղբակացութիւնները։

ՏՐԻԲՈՒՆ ԵՂԲ. — Տեղեկագրին ընդունելութեան կը հաւանիմ։

ԳԵՐՅԱՐԳԵԼԻՆ. — Եղբայրներ, ոչ մէկ ղիտողութիւն եղած է տեղեկագրին խմբագրութեան մասին. հաստատենք զայն։

Իւրաքանչիւրը դառնալով Գերյարգելիին, իր աջ ձեռքը կ'երկարէ եւ ձեռքը ղիստին կը տանի։

Գերյարգելիին, դառնալով արարողապետին։

— Եղբայր Արարողապետ, հաճեցէք նախազաւիթը ելնել եւ ստուգել թէ՛ կա՞ն այցելու եղբայրներ։

Այդ պաշտօնեան կը կատարէ անմիջապէս տրուած հրամանը եւ այդ մասին կը հաղորդէ Ա. եւ Բ. վերահսկիչ եղբայրներուն։

Եթէ ուրիշ օթեակներէ կան այցելուներ կամ պատուիրակութիւններ, Գերյարգելին առաջին իրաւասու եղբօր հրահանգ կուտայ ստուգել անոնց ով ըլլալը եւ կ'առաջարկէ արարողապետ օգնական եղբօր որ անոնց ընկերանայ։

Երբ Սարկաւազ եղբայրը կը հաստատէ ամէն օրինաւորութիւն, այն ատեն Գեր.ը կ'արտօնէ որ՝ անոնք ներս մտնեն եւ անոնց հանդէպ իրենց զանազան աստիճաննե-

րու եւ կարգերու համեմատ, յարգանք կ'ընծայուի։ (Ընդհ. կանոնագրութեան 62 - 63 - 64 հատուածներուն համեմատ)։

Դռնապահ եղբայրը կը տեղեկացնէ օգնական արարողապետ եղբօր թէ՛ կրնան այցելու եղբայրները ներս մտնել։ Օգնական արարողապետ եղբայրը Տաճարին դրան կը դարնէ, վերահսկիչ եղբայրները զայն կը հաղորդեն Գեր.ին, Գեր. եղբայրը՝ Բ. վերահսկիչ եղբօր։

— Գացէք տեսէք ով դուռը կը բաղիս իբրեւ որմնադիր։

ՊԱՏ. — Այցելու եղբայրներ են, որոնք եր հարցնեն թէ՛ կրնա՞ն մտնել Տաճար։

ԳԵՐ. — Թոյլատրեցէք անոնց Տաճարի մուտքը. ոտքի եւ ի կարգի, եղբայրներ, սուր ի ձեռին։

Եթէ այցելուները բարձր աստիճանաւորներ կամ տիտղոսաւորներ են, աստղադարդ եղբայրներ կ'երթան զանոնք ղիմաւորելու եւ թափօրը կը յառաջանայ պողպատէ կամարին տակ, թակելու բաղխումով։

Գերյարգելին կը մեծարէ այցելու եղբայրները շնորհակալութիւն կը յայտնէ իրենց այցելութեան համար եւ իրենց բարիգալստեան համար ծափահարութիւններ տեղի կ'ունենան։

Երբ այցելու եղբայրները պատասխանած են արդէն, աշխատանոցը, Գերյարգելիին հրամանին վրայ, կը սկսի թմրկահարութեան։ (Եթէ այցելուն նուիրապետութեան մէջ բարձրացած է, շնորհակալութիւն չի յայտնէր ա՜նոր՝ իր կատարած աշխատանքներուն համար։

ԳԵՐ ԵՂԲ. — Առաջնորդեցէք մեր շատ սիրելի եղբայրները իրենց աստիճաններուն համապատասխան տեղերը։

Յետոյ Գեր. եղբայրը կը տեղեկացնէ թէ՛ ինչո՞ւ այդ նիստը տեղի կ'ունենայ։ Դասախօս եղբօր մը ընդունելութիւնը վերջին նիստին մէջ քուէով բնորոշած։ Լուսթիւն կը պահանջէ եւ ուշադրութեան կը հրաւիրէ, նկատելով որ՝ ներընծայացումը որմնադրութեան իբրեւ ամենէն լուրջ աշխատանքներէն մին է, քանի որ առաքինի մէկը պիտի առաջնորդուի ճշմարտութեան ուղիին մէջ։

ԳԵՐ. ԵՂԲ. — Եղբայրներ, երկու միաձայն քուէար-

կութեամբ դուք ընդունեցիք դասախօս Ռ...ը, որ ընդունուի մեր խորհուրդներուն մէջ. դիտողութիւն եթէ չկայ՝ կը հրաւիրեմ ձեզ որ ձեր հաւանութիւնը յայտնէք, ընկալեալ սովորութեան համաձայն: Ա. եւ Բ. վերահսկիչ եղբայրներ, տարէք այս հաղորդագրութիւնը ձեր սիւններուն:

Վերահսկիչները կը կատարեն հրամանը եւ կը յայտնեն թէ որ եւ է դիտողութիւն չկայ:

Տրիրուն եղբայրը Գեր. եղբոր հրաւերին վրայ, կը յայտնէ ընդունելութեան ի նպաստ տրուած համամբատութիւնը:

ԳԵՐ. ԵՂԲ. - Քանի որ չկայ դիտողութիւն, ուրեմն ասանք մեր հաւանութիւնը գործածուած նշանով:

Բոլոր եղբայրները կ'երկարեն իրենց ձեռքը եւ կը թողուն զայն որ իրենց դողնոցին վրայ իյնայ: Եթէ դիտողութիւն մը ըլլայ, կը վիճարանին այդ մասին:

Գեր. եղբայրը՝ արարողապետ եղբոր.

— Իմաց տուէք, դռնապահ եղբոր միջոցով, պատրաստիչ եղբորը, որ Օթեակը կը սպասէ, այն տեղեկութիւնը որուն համար յանձնառու եղած է:

Պատրաստիչ եղբայրը տեղեկանալով այդ մասին, կը բաղիւժ գրան եւ ներս կը մտնէ, եւ կը հաղորդէ իրենց մէջ մտնելու հետամուտ եղողին մասին տեղեկութիւններու եւ նոր եղբոր հրահանգ կուտայ որ ընդունուած տրամադրութիւններուն մէջ, երեք հարցումներուն պատասխանէ եւ պարտադրուած կտակը ներկայացնէ Գեր. եղբոր:

Գեր. եղբայրը՝ պատրաստիչ եղբոր.

— Գացէք պատրաստեցէք պաշտամունքի հետամուտը պէտք եղած կարդ ու սարքով եւ ինձ բերէք իր գոհարները եւ իր մետաղները:

Պատրաստիչ եղբայրը դուրս կ'ելլէ եւ ներս կուգայ արարողապետ եղբոր տալով գոհարները, մետաղները, եւայն: Մինչ այդ երբ Գերյարգելին Օթակին կը կարգայ հարցումներուն տրուած պատասխանները եւ կտակը, որոնց մասին կ'ընէ իր դիտողութիւնները, պատրաստիչ եղբայրը պաշտամունքի հետամուտ եղողին աչ-

քերը կը կապէ, խորհրդածութեան սենեակէն դուրս կը հանէ եւ զայն կը դնէ այն վիճակին մէջ որով կրնայ Օթեակէն ներս մտնել, եւ որ է՝ դրուել բաց, մարմնոյն կէսը չապիկի մը մէջ, ձախ թեւը դէպի կուրծքին ձախ կողմը բաց, աջ ծունկը մերկ, ձախ ոտքը իբրեւ կօշիկ չչուական մը հագած:

Օթեակէն դեռ ներս չմտած, Գերյարգելին՝

— Սարկաւազ եղբայր, ձեզ կը պատկանի կարեւոր պաշտօնը պաշտամունքի հետամուտ եղողը Փիղիքական փորձերու ենթարկել, եւ զայն առաջնորդել խորհրդանշանական ճամբորդութիւններու մէջ եւ զայն անցընել այն ուղիներէն ուրիշ պէտք է անցնի: Պէտք է որ պատրաստուի. առէք դասախօս եղբայրը:

Սարկաւազ եղբայրը կը դոյգէ Տաճարը:

ԳԵՐՅԱՐԳԵԼԻՆ. - Եղբայրներ, ընդունելութեան ատեն ցոյց չտանք մեր պաշտօնները:

Կը զարնեն Տաճարին դրան:

Գերյարգելին, զօրաւոր ձայնով.

— Գացէք, տեսէք, ո՞վ կը զարնէ դրան:

Ա. վերահսկիչ եղբայրը նոյն հարցումը կ'ընէ Բ. վերահսկիչ եղբոր, որ իր կարգին զայն կը փոխանցէ երկրորդ սարկաւազ եղբոր: Այս վերջինը կ'իտովին դուռը կը բանայ եւ կը հարցնէ.

— Ո՞վ էք, ի՞նչ կ'ուզէք:

— Նորեկ մըն է որ կ'ուզէ իբրեւ որմնադիր ընդունուիլ:

Երկրորդ սարկաւազը այդ պատասխանը կուտայ երկրորդ վերահսկիչ եղբոր, որ կը հաղորդէ առաջին վերահսկիչ եղբոր, եւ սա կը հաղորդէ Գերյարգելին: (Ամէն հարցում եւ պատասխան այս երեք կարգի ձեւակերպութիւնը կը կրէ):

ԳԵՐ. - Հարցուցէք, ի՞նչ յոյս ունի որ կրնայ ընդունուիլ ազատ որմնադիրներու մէջ:

ՊԱՏ. - Կը յուսայ որ կ'ընդունուի, որովհետեւ բարի վարքի տէր է եւ թէ ազատ դիրք մը ունի, պատուաւոր է: (Ազատ Որմնադրութիւնը կ'ընդունի ամէն երկրի մարդիկ իրեն մէջ, առանց ցեղի եւ կրօնի խտրութեան,

պէտք է յարուցուի որեւէ կրօնական եւ քաղաքական հարց որ կրնայ գէշ ազդել նորամուտին եւ ունկնդիր հասարակութեան վրայ) :

ԳԵՐ. - Հարցուցէք իր անունը, մականունը, տարիքը, ծննդավայրը :

Պատասխանները կը տրուին :

ԳԵՐ. - Հարցուցէք իր զբաղումը, իր ներկայ բնակավայրը եւ թէ իրապէս մտադրութիւն ունի՞ր ընդունուի իր Սղատ Որմնաղիւր :

Պատասխանը կը տրուի :

— Ներս մտցուցէք : (Երեք անգամ կրկնուած) :

Բ. Սարկաւազը կղպանքները ազմուկով կը քաշէ, մեծ երկաթէ դռները կը բանայ : Թեկնածուն ներս մտած է, որմէ վերջ, դարձեալ նոյն դռները կը փակէ : Առաջին սարկաւազը եղբայրը նորեկին երկու ձեռքերէն բռնած, զայն կը ներկայացնէ երկրորդ վերահսկիչին .

— Ձեզ կը ներկայացնեմ Ռ...ը, պէտք եղած կերպով պատրաստուած թեկնածու՝ Որմնաղրութեան մէջ ընդունուելու համար :

Երկրորդ վերահսկիչ եղբայրը զայն կը հաղորդէ առաջին վերահսկիչ եղբոր, որ իր կարգին Գերյարգելին :

Գերյարգելին՝ առաջին վերահսկիչ եղբոր .

— Ձեր ներկայացուցած անձը իմ ուշադրութիւնս զբաւեց. ըսէ՛ք երկրորդ իրաւասու եղբոր՝ թեկնածուին սորվեցնել ինչ որ հարկ է :

Ա. վերահսկիչ եղբայրը Բ. վերահսկիչ եղբոր .

— Ձեզի կը ներկայացնեմ եղբայր Ռ...ը որ իր ընծայացումի ճամբորդութիւնը կ'ընէ :

Բ. վերահսկիչ եղբայրը .

— Թող Ռ... եղբայրը յառաջանայ ինձ մօտ իբր որմնաղիւր :

Ա. վերսԱՀՍԿԻՉ ԵՂԲ. - Բան մը ունի՞ք հաղորդելիք :

Բ. վերահսկիչ եղբայրը կ'ընէ եւ նորընծային կը հպի, կը հարցնէ :

— Եղբայր երկրորդ հսկիչ, ի՞նչ է այս. երկրորդ վերահսկիչ եղբայրը ի՞նչ կը հարցնէ :

ՆՈՐԵԿԸ. - Բառ մը :

Բ. վեր. եղբ. - Ինձ տուէք այդ բառը :

ՆՈՐԵԿԸ. - Իմ նորընծայացումիս մէջ զիս...

Բ. վեր. եղբ. - Ինչպէս որ կ'ուզէք, անցէք :

Ա. վեր. եղբ. - Թող եղբայր Ռ...ը դէպի ինձ դայ իբր որմնաղիւր : Ի՞նչ է այս, հետեւինդ ուրիշ ի՞նչ կը բերէք :

ՆՈՐԵԿԸ. - Աչակերտի նշանը :

Ա. վեր. եղբ. - Իմ... մէջ պատիժին համար եւ այդ՝ լսել կ'ուզէ որ աւելի իբրեւ պատուաւորութեան յանձնառութիւն կը տրուի, գէշ չարտայայտուիլ այն դաղտնիքներուն մասին որոնք ինձ հաղորդուեցան :

Ա. վեր. եղբ. - Բան մը ուի՞ք ինձ հաղորդելիք :

ՆՈՐԵԿԸ. - Այո :

Ա. վերահսկիչ եղբայրը ոտքի կ'ելլէ եւ կը հպի նորեկին :

— Ի՞նչ է այս :

Ա. վեր. եղբ. - Ի՞նչ կ'ուզէ :

ՆՈՐԵԿԸ. - Բառ մը :

Ա. վեր. եղբ. - Ինձ անցուցէք այդ բառը :

ՆՈՐԵԿԸ. - Իմ ներընծայացումիս...

Ա. վեր. եղբ. - Ուրիշ՞ կուգայ այդ բառը :

ՆՈՐԵԿԸ. - Կ. բջիջնէ :

Ա. վեր. եղբ. - Ի՞նչ է այդ բառին իմաստը :

ՆՈՐԵԿԸ. - ...

Ա. վեր. եղբ. - Իրեն անցուցէք...

Եւ անոր աջ թեւէն բռնելով կ'առաջնորդէ զինքը Գերյարգելին եւ կ'ըսէ, որոշ նշանէ մը վերջ .

— Գերյարգելի Տէր, Ձեզ կը ներկայացնեմ Ռ... եղբայրը, որ իր ներընծայացման ճամբորդութիւնը կը կատարէ եւ կը խնդրէ ձեր մէկ օժանդակութեան ապացոյցը :

Ա. վերահսկիչ եղբայրը նորեկին .

— Գերյարգելի պետին հրամանով ձեզ կը զգեստաւորեմ. որմնաղիւրի յատկանշական հագուստը : Աւելի հին է քան Պատուոյ Ոսկեղեղ մը կամ Հոռոմէական Արծիւը, սակայն պատուաբեր քան Ծնրակապը կամ աշխարհի որ եւ է կարգի աստիճանաւորումը, որովհետեւ անիկա

նշանն է անմեղուութեան եւ բարեկամութեան կապին: Իմ բոլոր իշխանութեամբս ձեզ կը հրաւիրեմ որ զայն հագնիք եւ զայն նկատէք այն նպատակին յատկացուած, որուն համար ձեզ կը տրուի, եւ կը յայտնեմ ձեզ որ՝ եթէ դուք չանարգէք այդ պատուազգեստը, ան ձեզ բնաւ չանարգեր:

Ա. վերահսկիչ եղբայրը ուժով մը իր ձեռքը կը զարնէ այդ պատուազգեստին, եւ միւս եղբայրներն ալ ձեռքերն կը զարնեն իրենց դողնոցին վրայ:

Աշխատութեանց ղադարում:

Գերյարգելին Բ. վերահսկիչ եղբայր.

— Ժամը քանի՞ն է:

— Յերեկ, Գերյարգելի Տէր:

ԳԵՐՅԱՐԳԵԼԻ ԻՆ. — Ի՞նչ է ձեր պարտականութիւնը:

— Եղբայրները աշխատանքէ հանդիստի հրաւիրել:

ԳԵՐ. — Հանդիստի ժամը իմացուցէք:

Բ. ՎԵՐ. ԵՂԲ. — Եղբայրներ, Գերյարգելին հրամայում՝ դադարեցուցէք ձեր աշխատանքը եւ հանդատացէք: Ուշադրութիւն ըրէք որ երբ ձայն մը լսէք, վերադառնաք ձիւղ ատենին, մեր շահուն եւ հաճոյքին համար:

Բ. վերահսկիչ եղբայրը հարուած մը կուտայ, օձիքը կը կեցնէ, Ա. վերահսկիչ եղբայրը կ'իջեցնէ իր օձիքը:

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՎԵՐՍԿՍՈՒՄ

ԳԵՐ. — Բ. վերահսկիչ եղբայր, ժամը քանի՞ն է:

Բ. ՎԵՐ. ԵՂԲ. — Կէսօրը անցած է, Գերյարգելի Տէր:

ԳԵՐ. — Ի՞նչ է ձեր պարտականութիւնը:

Բ. ՎԵՐ. ԵՂԲ. — Եղբայրները հանդիստէն աշխատանքի կանչել:

ԳԵՐ. — Յայտնեցէք որ աշխատանքի ժամը եկած է:

Բ. ՎԵՐ. ԵՂԲ. — Եղբայրներ, Գերյարգելին հրամայում, վերջացուցէք հանգչելու պահը, աշխատանքի վերսկսելու եւ ձեր որմնադրական դործը կատարեցէք:

Բ. վերահսկիչ եղբայրը թակի հարուած մը կուտայ: Ա. վեր. եղբայրը եւ Գերյարգելին կը պատասխանեն թափով: Բ. վեր. եղբայրը կ'իջեցնէ իր օձիքը, Ա. վեր. եղբայրը կը ցցէ իրենը:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՓԱԿՈՒՄ

Գերյարգելին Բ. վերահսկիչ եղբայր.

— Ի՞նչ է ամէն մէկ որմնադիրի պարտականութիւնը:

— Ստուգել որ Տաճարը պէտք եղած կերպով փափ է: ԳԵՐ. — Ստուգեցէք:

Բ. ՎԵՐ. ԵՂԲ. (դռնապահին) — Հաստատեցէք:

Բ. վեր. թակի երեք հարուած կուտայ եւ կ'ըսէ.

— Գերյարգելի Տէր, Տաճարը պէտք եղած կերպով փակ է:

ԳԵՐ. — Ա. վերահսկիչ եղբայր, ո՞րն է որմնադիրի երկրորդ պարտականութիւնը:

Ա. ՎԵՐԱՀՍԿԻՉԸ — Հսկել որ՝ որմնադիր եղբայրները ի կարգի՞ են:

ԳԵՐ. — Ի կարգի, եղբայրներ: (Ա. վերահսկիչ եղբայր). Ո՞րն է ձեր անփոփոխ տեղը:

Ա. ՎԵՐ. — Արեւմուտքը:

ԳԵՐ. — Ինչո՞ւ Արեւմուտքը:

— Ինչպէս Արեւը Արեւմտեան կողմը մայրամուտ կ'ունենայ վերջացնելու համար օրուան իր գործը, նոյնպէս Ա. վերահսկիչը Արեւմուտքի կողմը կը մնայ, փակելու համար նիստը, Գերյարգելին հրամայում, վերստահ ըլլալէ վերջ թէ ամէն եղբայր իր օրավարձքը ստացած է:

ԳԵՐ. — Ա. վերահսկիչ եղբայր, այս իրիկուան համար մեր աշխատանքը վերջացած է:

Ա. ՎԵՐ. — Եղբայրներ, ի փառս Տիեզերքի մեծ ճարտարապետին եւ Գերյարգելի Տիրոջ հրամանով, կը փակեմ աշխատանքները: Եւ թակի երեք հարուած տալով կ'իջեցնէ իր օձիքը:

Բ. ՎԵՐ. — Աշխատանքը վերջացած է մինչեւ... , բացի բացառիկ պարագայէ, որուն մասին եղբայրները նախապէս լուր կ'ունենան:

Բ. վերահսկիչը որմնադրական երեք թակի հարուած կուտայ:

ԳԵՐ. - (Բ. վերահսկիչին) - Ո՞րն է որմնադիրներուն առաջին պարտականութիւնը:

Բ. ՎԵՐ. - Ստուգել որ ճաճարը լաւ փակուած է եւ անմերձենալի՞:

ԳԵՐ. - Ստուգեցէք այդ, եղբայր:

Բ. վերահսկիչը կը փոխանձէ այդ հրամանը դռնապահ եղբոր:

Բ. ՎԵՐ. (Գերյարգելին) - Լաւ փակուած է:

ԳԵՐ. - Ա. վեր. եղբայր, ո՞րն է որմնադիր ընկերոջ մը պարտականութիւնը:

Ա. ՎԵՐ. - Ստուգել որ բոլոր եղբայրները ներկայ են սկանալի կարգին:

ԳԵՐ. (Բ. վերահսկիչին) - Ընկեր էք:

Բ. ՎԵՐ. - Ընկեր եմ եւ պատրաստ եմ զայն հաստատելու:

ԳԵՐ. - Ինչո՞վ կը ճանչցուի ընկեր մը:

ԳԵՐ. - Ուղղանկիւնով եւ ձեռոցով:

ԳԵՐ. - Ի՞նչ է ուղղանկիւնաձեւ ձեռոցը:

Բ. ՎԵՐ. - 90°-ի անկիւն մըն է որ չըջանալի մը 1/4ը կը ներկայացնէ:

ԳԵՐ. - Եթէ այդպէս է, ստուգեցէք որ բոլոր ներկայ եղբայրները ընկերներ են:

Բ. ՎԵՐ. ԵՂԲ. - Գերյարգելին հրամանով, կը հրաւիրեմ ձեզ, եղբայրներ, որ ցոյց տաք թէ ընկերներ էք:

Բ. վեր. եղբայրը Գերյարգելին.

— Բոլոր ներկայ եղբայրները ընկերներ են: Զայն հաստատեցին իրենց նշաններով. ես ձեզ կը ներկայացնեմ Ռ... եղբայրը որ պատրաստ է օրինաւորապէս ընկեր կոչուելու:

Բ. ՎԵՐ. - Առաջ եկէք, ի կարգի, եղբայր Ռ...:

Բ. ՎԵՐ. - Ի՞նչ է այս: Ուրիշ ի՞նչ ունիք որ ինձ կարողանաք յայտնել:

Ռ. ԵՂԲ. - Հպում մը:

Բ. ՎԵՐ. - Ուրիշ բան չունի՞ք ինձ հարցնելիք:

Ռ. ԵՂԲ. - Այո, բառ մը:

Բ. ՎԵՐ. - Ըսէ՛ք ինձ:

Ա. ՎԵՐ. - Գերյարգելի, ձեզ կը ներկայացնեմ Ռ. եղբայրը, որ ընկերոջ մը յատկացուած բոլոր խորհրդանշանները ունի, գաղտնիքներուն տիրացած է:

Ա. ՎԵՐ. - Գերյարգելին հրամանով ձեզ կը վարձատրեմ այս գողնուցով որ որմնադրութեան մէջ ձեր յառաջդիմութեան խորհրդանշանն է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓԱԿՈՒՄ

ԳԵՐ. - Բ. վերահսկիչ եղբայր, ստուգեցէք թէ ճաճարը փակ է եւ անմերձենալի է:

Բ. վեր. կը հաղորդէ այս հրամանը դռնապահին:

— Գերյարգելի Տէր, փակ է:

ԳԵՐ. (Ա. վերահսկիչին) - Ընկերոջ մը պարտականութիւնը ի՞նչ է:

— Ա. ՎԵՐ. - Ստուգել թէ՛ բոլոր ներկայ եղբայրները ընկերներ են:

ԳԵՐ. (Բ. վերահսկիչին) - Այս տեղ ի՞նչ դտաք:

Բ. ՎԵՐ. - Խորհրդաւոր նշան մը, Գերյարգելի:

Ա. ՎԵՐ. - Շինութեանց կեդրոնը, Գերյարգելի:

ԳԵՐ. - Ի՞նչ կը ներկայացնէ:

Ա. ՎԵՐ. Տիեզերքի մեծ ձարտարապետին կենդանի եւ յաւիտենական սկզբունքները կը ներկայացնէ:

Ա. ՎԵՐ. - Սկիզբի տեղի մեծ Օթեակին անուամբ եւ ենթակայութեամբ եւ Գերյարգելի եղբոր հրամանով, կը յայտարարեմ որ՝ փակուած են Ռ. Օթեակին 1. ընկերային աշխատանքները վերջացած են:

Բ. ՎԵՐ. - Երջանիկ սրտով միացանք, եղբայրներ, խաղաղութեամբ բաժնուինք եւ յիշենք միշտ լուսթեան Օրէնքը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Որոնց պարտի պատասխանել թեկնածուն
բարձրացումը ստանալէ առաջ
Օ-ը երկրորդ Աստիճանի մէջ ըլլալով:

Գ. Վ. — Եղբայրնե՛ր, այս երեկոյ եղբ. Ա. Բ., եր-
րորդ Աստիճանի անցնելու համար թեկ. է, բայց նախ
քան այդ, պարտաւոր է ապացուցանել մեզ թէ պէտք
եղած յառաջդիմութիւնը բրած է նախորդ Աստիճաննե-
րուն մէջ, ըստ այնմ կարգ մը անհրաժեշտ հարցումներ
պիտի ուղղեմ իրեն:

Թեկ.ն կ'առաջնորդուի Ա.Ս.ին կողմանէ Գ.Վ.ին
դիմաց:

(Քննութիւնը կ'սկսի. «Հարցարան»ը տե՛ս երկ-
րորդ Աստիճան, քիչ վերը):

Գ. Վ. — Եղբայրնե՛ր, ասոնք են սովորական հար-
ցումները, եթէ որ եւ է Եղբայր կը փափաքի որ ուրիշ
հարցումներ ուղղեմ, սիրով պիտի ընեմ դայն:

(Գ. Վ.ը կը խնդրէ Վ. Ո.է վար Աստիճանաւոր-
ներէն քողով Օ.ը:)

Ա. Ս.ը կ'առաջնորդէ թեկ. Գ. Վ.ին աջ կողմը:

Գ. Վ. — Եղբ. Ա. Բ. ձեր պատուոյն վրայ՝ իբր մարդ,
եւ ձեր հաւատարմութեան վրայ՝ իբր Ո., կը խոստա-
նա՞ք թէ յարատեւութեամբ մինչեւ վերջը պիտի հետե-
ւիք ձեզ շնորհուելիք Վ. Ո.ի Վսեմ Աստիճանին Արա-
րողութեան:

Թեկ. — Կը խոստանամ:

Գ. Վ. — Նախորդ Երկու Աստիճաններուն մէջ, զո՛ւք
Յանձնառու եղած էիք պատիժներու, կը խոստանա՞ք
թէ, նոյն ծանրագոյն խոհեմութեամբ, գաղտնի պիտի
պահէք, ինչպէս Ա. Ո.եան միւս Գաղտնիքները, ինչ որ
հիմայ պիտի հաղորդեմ ձեզի:

Թեկ. — Կը խոստանամ:

Գ. Վ. — Այն ատեն ձեզի պիտի վստահիմ մուտքի
չօշ... մը եւ անձ... մը, որ ձեզ պիտի առաջնորդեն այն
Աստիճանին մէջ ուր ընդունուել կը փափաքիք: Մուտքի
Շօշ...ը կը տրուի որոշ...: Մուտքի այս Շօշ...ը կը
պահանջէ Անձ... մը որ է՝...: Ան մետաղներու առա-
ջին արհեստաւորն էր, այս բառին նշանակութիւնն
է...: Դուք մասնաւորապէս ուշադիր պէտք է ըլլաք
յիշելու այս բառը, որովհետեւ առանց անոր անկարելի
պիտի ըլլայ ձեզ մտնելու բարձրագոյն Աստիճանի Օ.
մը: Անցի՛ր...:

Ա. Ս.ը կը բռնէ թեկ.ին աջ ձեռքէն եւ կը կեցնէ
Յ. Մ. Վ.ին ձախ կողմը եւ կը հրաւիրէ գայն՝ բա-
րեւի Գ. Վ.ը նախ իբր Ն. Ա. Ո. եւ յետոյ իբր
Բ. Ա. Ո.:

Թեկ.ն Օ.ը կը քողու օրինաւորապէս պատրաս-
տուելու համար, իր եր... ք...երը ամբողջ, կ...ը
եւ եր...ծ...երը եւ եր...կը...կը մ...:

Այս ժամանակամիջոցին Օ.ը կը բացուի երրորդ
Աստիճանով:

Վ Ե Ր Զ

ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԵՂԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ



ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆՈՎ
ՕԹԵԱԿԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Գ. Վ.ը կուտայ հ... մը որ կը կրկնուի Յ. Մ.
Վ.էն եւ Յ. Կ. Վ.էն:

Գ. Վ. — Եղբայրնե՛ր, օգնեցէ՛ք ինձ որ բանամ Օ.ը
Երրորդ Աստիճանով (ամէնքը ոտքի կ'ելնեն):

Գ. Վ. — Յ. Կ. Վ., ո՞րն է առաջին պարտականու-
թիւնը իւրաքանչիւր Վ. Ո.ի:

Յ. Կ. Վ. — Տեսնել թէ Օ.ը օրինաւորապէս դո՞ց է:

Գ. Վ. — Կատարել տուէ՛ք այդ պարտականութիւնը:

Յ. Կ. Վ. — Եղբ. Ն. Պ., տեսէ՛ք թէ Օ.ը օրինաւորա-
պէս դո՞ց է:

Ն. Պ. ք կուտայ հ...ք երկրորդ Աստիճանի, որուն կը պատասխանէ Ա. Դ. ք, այն առեմ Ն. Պ. ք կը յառաջանայ ք...ք առնելով եւ ն... տալով:

Ն. Պ. — Յ. Կ. Վ., Օ. ք օրինաւորապէս դոյ է:

Յ. Կ. Վ. ք կուտայ հ...ք եւ ն...ք:

Յ. Կ. Վ. — Գ. Վ., Օ. ք օրինաւորապէս դոյ է:

Գ. Վ. — Յ. Մ. Վ., ո՞րն է երկրորդ պարտականութիւնը:

Յ. Մ. Վ. — Տեսնել թէ եղբայրները պարտա՞ստ են կենալու ի կարգի իբր Ը. Ա. Ո. ներ:

Գ. Վ. — Ի կարգի եղբայրներ, երկրորդ Աստիճանով:

Եղբայրները կը կենան ի կարգ իբր Ը. Ա. Ո. ներ:

Գ. Վ. — Յ. Կ. Վ., դուք Վ. Ո. մըն է՞ք:

Յ. Կ. Վ. — Այո՛, Գ. Վ., փորձեցէք դիտել հաստատեցէք:

Գ. Վ. — Ճարտարապետութեան մէջ ո՞ր գործիքով պիտի ապացուցուի այդ:

Յ. Կ. Վ. — Անկ...ով եւ Կար...ով:

Գ. Վ. — Դուք տեղեակ ըլլալով այդ օրինաւոր դրութեան, հաստատել պիտի տաք եղբայրներուն նշ...ով թէ Վ. Ո. ներ են եւ պիտի ապացուցանէք ինձ զայն ընդօրինակելով իրենց ն...ք:

Յ. Կ. Վ. — Եղբայրներ, Գ. Վ. ինչ հրամանն է որ ապացուցանէք ն...ով ձեր Վ. Ո. ներ ըլլալը:

Ինչ որ կը կատարուի: Յ. Կ. Վ. կը տեսնէ ն...:

ներումն ճշդութիւնը:

Յ. Կ. Վ. — Գ. Վ., Եղբայրները ապացուցին ն...ով իրենց Վ. Ո. ներ ըլլալը եւ ես հնազանդելով ձեր հրամանին կ'ընդօրինակեմ իրենց ն...ք, այսպէս:

Յ. Կ. Վ. ք ք...ք կ'առնէ եւ կուտայ ն...ք:

Գ. Վ. — Յ. Կ. Վ., կը հաստատեմ ն...ներուն ճշդութիւնը (կուտայ զանոնք):

Գ. Վ. — Յ. Կ. Վ., ուրիշ կուգաք:

Յ. Կ. Վ. — Ար...էն:

Գ. Վ. — Յ. Մ. Վ., դէպի ո՞ւր կ'ուղղէք ձեր քայլերը:

Յ. Մ. Վ. — Դէպի Արմ...:

Գ. Վ. — Յ. Կ. Վ., ի՞նչ պատճառաւ կը թողուք Ար...ը եւ կ'երթաք դէպի Արմ...:

Յ. Կ. Վ. — Ի խնդիր անոր որ կորսուած էր եւ որ ձեր հրահանգներովը եւ մեր ջանադրութեամբը կը յուսանք գտնել:

Գ. Վ. — Յ. Մ. Վ., ի՞նչ է այն որ կորսուած էր:

Յ. Մ. Վ. — Իսկական Գաղտնիքները Վ. Ո. ի մը:

Գ. Վ. — Յ. Կ. Վ., ինչպէ՞ս կորսուեցան անոնք:

Յ. Կ. Վ. — Անժամանակ մահուամբ մեր Վարպետին՝ Հ. Ա. ի:

Գ. Վ. — Յ. Մ. Վ., ո՞ւր կը յուսաք գտնել զանոնք:

Յ. Մ. Վ. — Կեդրոնը:

Գ. Վ. — Յ. Կ. Վ., ի՞նչ է կեդրոնը:

Յ. Կ. Վ. — Կէտ մը շրջանակի մը մէջ, ուրկից շրջադիժի մը բոլոր մասերը հաւասարապէս հեռու են:

Գ. Վ. — Յ. Մ. Վ., ինչո՞ւ կը յուսաք զանոնք կեդրոնը գտնել:

Յ. Մ. Վ. — Որովհետեւ կէտ մըն է այն ուրկից ոչ մէկ Վ. Ո. կրնայ սխալիլ:

Գ. Վ. — Այն առեմ պիտի օժանդակենք ձեր խուզարկութեանց մէջ եւ թո՛ղ երկինք օդնեն մեր միացեալ ջանքերուն:

ԵՂԲԱՅՐՆԵՐ. — Թո՛ղ այդպէս ըլլայ:

Գ. Վ. — Եղբայրներ, յանուն Բարձրելոյն, օրինաւորապէս բացուած կը յայտարարեմ այս Օ. ք կեդրոնի վրայ, հրահանգելու եւ յառաջացնելու համար Վ. Ո. ները, եւ զայս կ'ընեմ (կուտայ հ...) ու այս պէտք է ըլլայ ձեր ն...ք (ն...ք կուտայ):

(Ն. Վ. ք Կար...ի ծայրերը կը դնէ Անկ...ին վրայ):

Գ. Վ. ք կուտայ հ... որոնք կը կրկնուին Վ. ներէն, յետոյ բոլոր եղբայրները կուտան Մեծ եւ Արեւայական ն...ք:

Գ. Վ. — Փա՛ռք Պատիւ Բարձրելոյն:

Եղբայրներ իրենց տեղերը կը նստին:

Վ Ե Ր Զ

ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆՈՎ ՕԹԵԱԿԻ ԲԱՅՄԱՆ

ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Օ.ը, այս միջոցին, մթութեան մէջ է: Ա. Դ.ը երկրորդ Աստիճանի հարուածով կը տեղեկացնէ Թեկ.ին պատրաստ ըլլալը: Այն ատեն Ն. Պ.ը կը յառաջանայ դէպի Յ. Կ. վ.ը վ. Ո.ի պ. . . ի ն. . . ր տալով:

Ն. Պ. — Յ. Կ. վ. ծ տեղեկատուութիւն մը կայ:

Յ. Կ. վ. (Ոտքի կ'ելնէ ն. . . ր տալով առանց զարնելու). — Գ. վ., տեղեկատուութիւն մը կայ:

Գ. վ. — Յ. Կ. վ., տեղեկացէ՛ք թէ ո՞վ կը փափաքի ընդունուիլ:

Յ. Կ. վ. (Իր տեղը նստելով). — Եղբ. Ն. Պ., տեսէ՛ք թէ ո՞վ կը փափաքի ընդունուիլ:

Ն. Պ. (Դուռը կը բանայ եւ կը հարցնէ). — Ո՞վ կայ հոգ:

ԱՌԱՋՆՈՐԴ (Ն. Պ.ին). — Եղբ. Ա. Բ., որ կանոնաւորապէս ընդունուած է Ա. Ո. մէջ, Ը. Ա. Ո.ի Աստիճանին անցած ու ըրած է այնքան յառաջընթիւններ որ կը յուսադրեն զինքը արժանանալու վ. Ո.ի վսեմ Աստիճանին:

Ն. Պ. (Առաջնորդին). — Ի՞նչպէս կը յուսայ արժանանալ այդ առանձնաշնորհումներուն:

ԱՌԱՋՆՈՐԴ. — Օգնութեամբն Աստուծոյ, շնորհիւ Անկ. . . ին եւ Կար. . . ին ու Մուռքի Շօշ. . . ի մը եւ Անձ. . . ի մը օժանդակութեամբ:

Ն. Պ.ը Թեկ.էն կը պահանջէ Մուռքի Շօշ. . . ր եւ Անձ. . . ր որ կուտայ անոր:

Ն. Պ.ը դուռը կը գոցէ, կը յառաջանայ քայլ մը դէպ Գ. վ.ը պ. . . ին ն. . . ր տալով:

Ն. Պ. — Գ. վ., Օ.ին դուռը կ'ապասէ Եղբ. Ա. Բ., որ կանոնաւորապէս ընդունուած է Ա. Ե.եան մէջ, Ը. Ա. Ո.ի Աստիճանին անցած ու ըրած է այնքան յառաջընթիւններ որ կը յուսադրեն զինքը արժանանալու վ. Ո.ի վսեմ Աստիճանին:

Գ. վ. — Ի՞նչպէս կը յուսայ արժանանալ այդ առանձ-

նաշնորհումներուն:

Ն. Պ. — Օգնութեամբն Աստուծոյ, շնորհիւ Անկ. . . ին ու Կար. . . ին եւ օժանդակութեամբը Մուռքի Շօշ. . . ի եւ Անձ. . . ի մը:

Գ. վ. — Մենք կ'ընդունինք այն հոգի օժանդակութիւնը որով նա կը խնդրէ ներս ընդունուիլ: Կ'ապահովցնէ՞ք, Եղբ. Ն. Պ., թէ ունի Մուռքի Շօշ. . . ր եւ Անձ. . . ր:

Ն. Պ. — Կ'ապահովցնեմ, Գ. վ.: (Ն. Պ.ը ստացած ըլլալով զանոնք Թեկ.էն):

Գ. վ. — Այն ատեն թոյլ տուէ՛ք որ ներս ընդունուի պարտ ու պատշաճ հնազարեան եղանակաւ:

Ն. Պ.ը Կար. . . ին ծայրերը կը սեղմէ Թեկ.ին ա. . . եւ ձ. . . կ. . . ին վրայ, ուրկէ յետոյ կը բարձրացնէ Կար. . . ր գլխուն վրայէն, այնպիսի ձեւով մը որ Գ. վ.ը կարենայ տեսնել քէ ան իր պարտականութիւնը կատարած է:

Ն. Պ. — Յանուն Բարձրելոյն մտէ՛ք այս վ. Ո.ներու Օ.ը Կար. . . ի ծայրերուն վրայ, սեղմելով զանոնք ձեր ա. . . եւ . . . ձ. . . մ. . . կ. . . ին վրայ, որ կ'ուսուցանէ ձեզ թէ ինչպէս որ մարդու մը ամենակենսական մասերը կը բովանդակուին իր կուրծքին ներքեւ, նոյնպէս ալ Ա. Ո.եան ամենաարժէքաւոր վարդապետութիւնները կ'ամփոփուին Կար. . . ին ծայրերուն միջեւ. անոնք են Առաքինութիւն, Բարոյականութիւն եւ Եղբայրական Սէր:

Ա. Ս.ը կը կենայ Թեկ.ին աջ կողմը, Կ. Ս.ը միւս կողմը: Զայն կ'առաջնորդեն Յ. Մ. վ.ին ձախ կողմը: Ա. Ս.ը կը հրահանգէ զինքը յառաջանալ դէպի Գ. վ.ը եւ բարեւել նախ իբր Ն. Ա. Ո. եւ յետոյ իբր Ը. Ա. Ո.:

Գ. վ. — Թո՛ղ Թեկ.ն ծ. . . է, երբ Երկնից Օրհնութիւնը պիտի հայցուի մեր աշխատութեանց վրայ:

Ա Ղ Օ Թ Ք

Ամենազօր եւ Յաւիտենական Աստուած, ճարտարապետ եւ Կառավարիչ Տիեզերաց, որուն ստեղծագործ

ուժէն ծաղում առած է ամենայն ինչ, մենք, տկար արարածներ Քու Նախախնամութեանդ, Քեզմէ խոնարհաբար կը խնդրենք հեղուլ օրհնութիւնդ Քու Սուրբ անունովդ դումարուած այս ժողովին վրայ: Կը խնդրենք մասնաւորաբար տալ Քու շնորհդ այս ծառայիդ որ կը խնդրէ մեզ հետ մասնակցիլ Վ. Ո. ի մը խորհրդաւոր զաղտնիքներուն: Շնորհէ՛ իրեն այնպիսի ուժ մը որ փորձի պահուն չի տկարանայ, այլ ապահով կերպով, Քու պաշտպանութեամբդ, անցնելով մահուան ստուերի հովիտէն, կարենայ վերջնականօրէն բարձրանալ մեզայ զերեզմանէն դէպի Լոյս՝ փայլելու համար աստղերու նման, յաւիտեանս յաւիտենից:

ԵՂԲԱՅՐՆԵՐ. — Թո՛ղ աղագէս ըլլայ:

Գ. Վ. — Թո՛ղ Թեկ. ն ոտքի ելնէ:

Ս. ներք Թեկ. ին երեք անգամ Օ. ին շրջանը ընել կուտան հետեւեալ կերպով. առաջին շրջանին նա կը բարեւէ Գ. Վ. ի եւ Յ. Մ. Վ. ը՝ իբր Ո., կը յառաջանայ դէպի Յ. Կ. Վ. ը նոյնպէս իբր Ո., կուտայ ն... ը, կը հաղորդէ Շօշ... ը եւ Բ... ը Ա... Աստի՛նանին: Երկրորդ շրջանին կը բարեւէ Գ. Վ. ը եւ Յ. Կ. Վ. ը իբր Ը. Ա. Ո. կը յառաջանայ դէպի Յ. Մ. Վ. ը նոյնպէս իբր Ը. Ա. Ո., ն... ը կուտայ, եւ կը հաղորդէ Շօշ... ը եւ Բ... ը այս Աստի՛նանին: Յետոյ կը կեցնեն գայն Յ. Մ. Վ. ին ձախ կողմը:

Գ. Վ. — Եղբայրները պարտին նկատի ունենալ թէ Եղբ. Ա. Բ., որ կանոնաւորապէս ընդունուած է Ա. Ո. եան մէջ, եւ երկրորդ Աստի՛նանին բարձրացած, անցք մը պիտի կատարէ հիմա իրենց առջեւէն ցոյց տալու համար թէ յատկապէս պատրաստուած է բարձրանալու Վ. Ո. ի Վսեմ Աստի՛նանին:

Երրորդ շրջանին Թեկ. ն կը բարեւէ Գ. Վ. ը եւ Յ. Կ. Վ. ը իբր Ը. Ա. Ո., կը յառաջանայ դէպի Յ. Մ. Վ. ը նոյնպէս իբր Ը. Ա. Ո. կուտայ ն... ը, եւ կը հաղորդէ Մուտփի Շօշ... ը եւ Անձ... ը որ նախապէս, Օթեակէն մեկնելէ առաջ ստացած էր Գ. Վ. էն: Յ. Մ. Վ. ը կը քննէ Թեկ. ն այդ Բ... ին նշանակութեանը մասին: Յ. Մ. Վ. ը ոտփի կ'ելնէ

կը բռնէ Թեկ. ին ա... ձ... էն և տալով Պ... ի ն... ը.

Յ. Մ. Վ. — **Գ. Վ.**, ձեզ կը ներկանացնեմ Եղբ. Ա. Բ. իբր Թեկ. մը, յատկապէս պատրաստուած բարձրանալու Վ. Ո. ի Վսեմ Աստի՛նանին:

Գ. Վ. — **Յ. Մ. Վ.**, հրահանդեցէք Ա. Ս. ը որ ուսուցանէ Թեկ. ին յառաջանալ դէպի Ար... օրինաւոր ք... ով:

Ա. Ս. ը Գ. Վ. ին դիմացը կը կենայ եւ կը հրահանգէ Թեկ. ին քէ Արմ. էն դէպի Ար. յառաջանալու եղանակն է առնուլ Ե... Բ... եր, որոնց առա... եկր... եւ երբ... Բա... երբ կը խորհրդանշեն Բ... գեր... ի մը վրայէն անցքը եւ միւս չ... Բա... երբ համարակ կամ անվեհեր Բա... եր են: Յետոյ Թեկ. ն կը դնէ կանոնաւոր դիրքին մէջ, այսինքն դէպի Ար... դարձած: Ինք կ'առնէ Ե... Բա... երբ, Թեկ. ին կատարել տալէ առաջ:

Գ. Վ. (Թեկ. ին). *Լաւ է որ տեղեկութիւն ունենանք հիմա թէ ձեր անվեհերութեան եւ հաւատարմութեան շատ լուրջ փորձ մը ինչպէս նաեւ աւելի հանդիսաւոր Ուխ. մը կ'սպասէ ձեզ: Ուստի պատրաստուած է՞ք դիմադրուելու զանոնք պէտք եղած կերպով:*

Թեկ. — Պատրաստ եմ:

Գ. Վ. — Այն ատեն պարտիք ձեր երկու ծունկերուն վրայ ծնրադրել: Դրէք ձեր երկու ձեռքերը այս Ն. Օ. Մ. ին վրայ: (Գ. Վ. ը Ե... մը կուտայ որ կը կրկնուի Յ. Մ. Վ. էն եւ Յ. Կ. Վ. էն, Եղբայրները ոտփի կ'ելնեն Պա... ի նշ... ը տալով, Ս. ներք կը խաչածեւեն գաւազանները:) Ըսէք ձեր անունը եւ մականունը ամբողջութեամբ եւ կրկնեցէք:

Ո Ի Խ Տ

Ես, Ա. Բ., ի ներկայութեան Բարձրելոյն եւ այս արժանընտիր ու յարգամեծար Վ. Ո. ներու Օ. ին, օրինաւորապէս սահմանադրեալ, կանոնաւորապէս դումարուած եւ յատկապէս նուիրադործուած, իմ ազատ կամքովս ու հաճութեամբս հանդիսաւորապէս եւ անկեղծօ-

բէն կը խոստանամ աշատեղ ու կ'երդնում այս Ն. Օ. Մ. ին վրայ թէ միշտ զաղտնի պիտի պահեմ ու ծածկեմ եւ բնաւ չպիտի յայտնեմ ոչ մին Գաղտնիքներէն, Խորհուրդներէն եւ Սեփականութիւններէն Վ. Ո. ի Աստիճանին, ոչ ոքի աշխարհի վրայ, բացի անոր կամ անոնց որոնք իրապէս եւ օրինաւորապէս իրաւունք ունին դիտնալու, եւ ոչ իսկ անոր կամ անոնց մինչեւ որ պատշաճ փորձարկութիւնը, ամենախիստ քննութիւնը կամ կատարեալ համոզումը չի հաստատէ թէ նա կամ անոնք՝ արժանի են այդ վստահութեան. եւ կամ Վ. Ո. ներու Օ. ի մը մէջ, օրինաւորապէս բացուած ըստ Կեդրոնի: Բաց աստի հանդիսաւորապէս կը խոստանամ համակերպիլ Անկ... ի եւ Կար... ի սկզբունքներուն պատասխանել եւ հնազանդիլ բոլոր օրինաւոր Նշաններուն եւ Կոչերուն որոնք կրնան ինձ տրուիլ Վ. Ո. ի մը կամ զրկուիլ Վ. Ո. ներու Օ. ի մը, եթէ նոյն իսկ ըլլայ իմ վզի պարանիս երկայնութեան շրջանակին մէջ, եւ չպիտի ունենամ որ եւ է արդարացում, ի բաց առեալ հիւանդութեան կամ հանրային եւ կամ անհատական զբաղումներու հարկեցուցիչ ստիպողականութեան պարագայի մը: Կ'ուխտեմ, նաեւ, հանդիսաւորապէս, պահել ու բարձր ի պատուի բռնել Ընկերակցութեան Հինգ Կէտերը, փորձով ինչպէս նաեւ խօսքով, թէ երբ իմ ձեռքս տամ Վ. Ո. ի մը ան ըլլայ ասպահով զբաւականը Եղբայրութեան, թէ իմ ոտքերս պարտին անցնիլ վտանգներու եւ դժուարութեանց մէջէն միանալու համար իրեններուն հետ, որպէս զի կազմեն փոխադարձ պաշտպանութեան եւ օգնութեան սիւն մը, թէ իմ ամենօրեայ աղերսներս պարտին ինձ յիշեցնել իւր կարօտութիւնները եւ տրամադրել իմ սիրտս օգնելու իր տկարութեան եւ օժանդակելու իւր պէտքերուն իմ ամբողջ կարողութիւններով՝ առանց վնասելու իմ անձիս եւ բնատնտեսաց թէ իմ կուրծքս պիտի ըլլայ իւր Գաղտնիքներուն նուիրական մէկ պահարանը երբ անոնք ինծի վստահուած են, ի բաց առեալ սպանութիւն, մատնութիւն, ոճիր եւ այն ամէն սպորինութիւնները որոնք հակառակ են Աստուածային պատուիրանաց եւ պետութեան օրինաց: Եւ վերջապէս

պարտիմ պահպանել Վ. Ո. ի մը պատիւը եւ խնամով հոգատար ըլլալ անոր իմինիս նման, թէ ես պէտք չէ վնասեմ անոր անձնապէս, եւ ոչ ալ զիտակցաբար հանդուրժեմ որ ուրիշներ անոր վնասեն, եթէ կարողանամ զանոնք արդիւնել, այլ ընդհակառակը, համարձակօրէն պիտի պաշտպանեմ իր բարի անունը ընդդէմ ամէն զըրպարտիչի եւ ամենախիստ կերպով պիտի յարգեմ անրիժ մաքրութիւնը իր մերձաւորներուն եւ սիրելիներուն յանձին իւր կնոջ, իւր քրոջ եւ իւր զաւկին: Այս բոլոր կէտերը, կ'երդնում հանդիսաւորապէս, պահպանել առանց որ եւ է խուսափումի, երկմտութեան կամ որ եւ է մտաւոր թաքուն նպատակի, հակառակ պարագային թողէ որ պատժուիմ... եւն.:

Գ. Վ. — Իբր զբաւական ձեր Հաւատարմութեան, ամբողջապ ընծայելու համար այս Հանդիսաւոր Ուխ... ը որչափ ատեն որ ապրիք, դուք պիտի համբուրէք երեք անգամ այս Ն. Օ. Մ. (կը կատարուի այս): Թողէ որ անգամ մը եւս ձեր ուշադրութիւնը հրաւիրեմ Անկ... ին եւ Կար... ին դրութեան վրայ: Երբ դուք Ն. Ա. Ո. մը եղաք, անոր երկու ծայրերն ալ ծածկուած էին ձեզմէ, Երկրորդ Աստիճանին մէջ մէկը յայտնուեցաւ, իսկ այս Աստիճանին մէջ ամբողջովին կը յայտնուի, հասկցնելու համար թէ դուք ի վիճակի էք այլեւս ազատօրէն գործելու այս երկու ծայրերովը ձեր Որմնադրական Պարտականութեանց Շրջագիծը կատարեալ ընծայելու համար (կը բռնէ անոր երկու ձեռքերէն): Վեր ե'լ, նոր Ուխտեալ Վ. Ո.:

Յ Ո Ր Դ Ո Ր

Վ. Ո. ի մը Մեծ եւ Հանդիսաւոր Ուխ... ը կատարած ըլլալով, իրաւունք ունիք այժմ պահանջելու ինձմէ այն վերջին եւ մեծագոյն փորձարկութիւնը որու միջոցաւ միայն կարող պիտի ըլլայիք ընդունուելու այս Աստիճանի Գաղտնիքներու մասնակցութեան: Բայց իմ առաջին պարտականութիւնս է հրաւիրել ձեր ուշադրութիւնը այն Աստիճաններուն վրայ որոնցմէ դուք անցած էք

արդէն, եւ որով դուք լաւագոյնս կարող պիտի ըլլաք
 բնորոշելու եւ գնահատելու մեր Դրութեան ամբողջու-
 թիւնը եւ այն յարաբերութիւնները որ կը միացնեն ա-
 նոր զանազան մասերը: Ձեր ընդունելութիւնը Որմնա-
 դիրներու մէջ, կարօտագին, խեղճ վիճակով մը, խոր-
 հրդաւոր աշխարհական նկարում մըն էր այն մուտ-
 քին զոր կը զործեն մարդիկ այս մահկանացու կեանքին
 մէջ մտնելով, ան կը յիշեցնէր բնական հաւատարու-
 թեան եւ փոխադարձ օժանդակութեան օգտակար դա-
 սերը, ան կը սորվեցնէր ձեզ տիեզերական բարեգործու-
 թեան եւ զթոյ իրական սկզբունքները, այսինքն փնտ-
 տրուել ձեր իսկ դժբախտութեանց միւլթարութիւնը օգ-
 նելով եւ սփոփելով ձեր նմանները իրենց տառապանքի
 ժամերուն մէջ, բայց ամէն բանէ վեր, անիկա սորվե-
 ցուց ձեզի հպատակիլ խոնարհութեամբ Տիեզերքի Մեծ
 Ճարտարապետին կամքին, եւ ձեր սիրտը նուիրել՝ ա-
 մէն տեսակ միաստակար եւ չար կիրքերէ մաքրագոր-
 ծուած եւ բնորոշակ միայն ճշմարտութեան եւ իմաս-
 տութեան, ինչպէս իւր Փառքին եւ ի բարեկեցութիւն
 ձեր նմաններուն: Յառաջ երթալով, միշտ ձեր քայլերը
 առաջնորդուած բարոյական ճշմարտութեան սկզբունք-
 ներէն, դուք յառաջացաք, Երկրորդ Աստիճանին մէջ,
 խորհրդածելու համար իմացական կարողութեանց վը-
 րայ, եւ զծել զանոնք իրենց յաջորդական բնութայնում-
 ներով Երկնային Գիտութեանց արահետներուն մէջէն,
 նոյն իսկ մինչեւ Աստուծոյ Գահ: Բնութեան զաղտնիք-
 ները եւ իմացական ճշմարտութեան սկզբունքները բաց-
 ուեցան ձեր աչքերուն առջեւ: Այսպէս, առաքինու-
 թեան եւ գիտութեան շնորհներով օժտուած ձեր մտքին,
 Բնութիւնը կը ներկայացնէ մէկ մեծ եւ հազուադիւր
 դաս մը եւս, ան կը պատրաստէ ձեզ, մտախոհութեամբ,
 ձեր գոյութեան վերջանալու ժամուն, եւ երբ, այս մտա-
 ցանդիկ կեանքի մանուածապատ արահետներէն, ան
 խոհութեանց միջոցաւ, ան ձեզ կ'առաջնորդէ այս վա-
 րերջապէս կը սորվեցնէ ձեզ թէ ինչպէս պէտք է մեռ-
 նիլ: Այս է, Եղբայրս, Ա. Ուեան Երրորդ Աստիճանի
 մասնաշաղկապը: Նա կը հրաւիրէ ձեզ անդրա-

դառնալ սոյն ահաւոր հարցին, եւ կ'ուսուցանէ ձեզի
 զգալ թէ արդար եւ առաքինի մարդու մը համար մահը
 չունի բնաւ արհաւիրելից սարսափներ, որոնք հաւատա-
 րէին կեղծիքի եւ անպատուութեան արատներուն: Այս
 մեծ ճշմարտութեան մէկ փառաւոր օրինակին կը հան-
 դիպինք Ա. Ուեան տարեդրութեանց մէջ, որ կը ներ-
 կայացնէ անխախտ հաւատարմութիւնը եւ ազնիւ մահը
 մեր Վարպետին՝ Հ. Ա. ի որ սպաննուեցաւ Ս. Թ. Տ. ին
 ճիշդ աւարտմանը պահուն, որուն շինութեան գլխաւոր
 ճարտարապետն էր: Բայց անոր մահուան պարագանե-
 րը լսելու համար դուք պէտք է հեռանաք ձեր Առաջ-
 նորդին հետ պատրաստուելու համար: Ձգեցէք Օ. ը ա-
 ռանց որ եւ է նշան տալու: (Թեկ. կը հեռանայ իր Ա-
 ռաջնորդին հետ եւ աչ... երբ կապ... է յետոյ կ'առաջ-
 նորդուի Օ.: Գ. Վ. ը կը հրաւիրէ Վեր. ները, որոնք կը
 բռնեն Թեկ. ն, Մ... ը՝ ձախ եւ Կ... ը՝ աջ կողմէն): Իր
 մահուան պարագաները հետեւեալներն էին. — Տասնեւ-
 հինգ Ը. Ուեան, գործաւորներու այն բարձրագոյն դա-
 տակարգէն որոնք նշանակուած էին վերհսկելու միւսնե-
 րուն վրայ, տեսնելով որ Տաճարը աւարտելու մօտ է
 եւ դեռ իրենք տեղեակ չէին Երրորդ Աստիճանի Գաղտ-
 նիքներուն, իրենց մէջ գաւազրութիւն մը սարքեցին՝
 ձեռք բերելու համար զանոնք որեւէ միջոցաւ, նոյն իսկ
 բռնութեան դիմելով: Իրենց գաւազրութիւնը գործա-
 դրութեան զննելու նախօրեակին, անոնցմէ տասնեւեր-
 կուքը մերժեցին գործակցիլ, բայց միւս երեքը, աւելի
 վաշտաղ եւ հաստատակամ նկարագրի տէր ըլլալով քան
 միւսները, հաստատ մնացին իրենց ամբարիշտ որոշու-
 մին վրայ ու այս նպատակաւ զացին դիրք բռնեցին Տա-
 ճարին Ար. Արմ. եւ Հր. մուտքերուն առաջ, ուրկէ մեր
 Վ... ը կէս օրին անցած էր, ըստ իր սովորութեան, իր
 Աղօթքը մատուցանելու համար Բարձրելոյն, (Հնդկաց
 ծննդայ): Աղօթելէ վերջ նա փորձեց վերադառնալ Հր.
 Մուտքէն երբ հանդիպեցաւ այդ վատերէն առաջնոյն,
 որ ի չոյ՛ յէ ուրիշ զէնքի, զինուած էր ծանր Ուղ... ով
 մը եւ սպառնալից կերպով պահանջեց իրմէ Վ. Ո. ի մը
 Գաղտնիքները, սղարարելով իրեն թէ մերժման պա-

բաղային մասը պիտի ըլլար անոր հետեւանքը: Մեր վ...ը՝ հաւատարիմ իր Ուխ...ին, պատասխանեց թէ այդ Գաղտնիքները աշխարհի վրայ միմիայն երեք հոգիի ծանօթ էին, եւ թէ առանց միւս երկուքին հաւանութեանը ո՛չ կրնար եւ ո՛չ ալ կ'ուզէր յայտնել զանոնք, բայց հասկցուց անոր թէ, անկասկած, համբերութեամբ եւ ջանադրութեամբ արժանաւոր Ը. Ո. մը պիտի արժանանար այդ Գաղտնիքներուն յարմար ատենին: Բայց թէ զաւով իրեն ինք պիտի նախընտրէր մահուան հանդուրժել քան թէ մատնել իրեն վստահուած նուիրական գաղտնիք մը: Այս պատասխանը դոհացուցիչ է թուելով, վատը սաստիկ հարուած մը տուաւ մեր վ...ին դիտուն, բայց անոր հաստատակամ կեցուածքէն հարուածը վրիպելով ճակատէն՝ դնաց մեծ ուժգնութեամբ հանդիպեցաւ անոր աջ քունքին (այստեղ Յ. Կ. վ. ը Ուղ...ով կը դպի թեկիւն Ա... Բուն...ին) որ դեղեւեցաւ եւ ինկաւ իր ձախ ծունկին վրայ (այստեղ թեկիւն կ'իյնայ իր ձ... ծ... վրայ): Հարուածին թմրութիւնը անցնելէ վերջ, մեր վ...ը յառաջացաւ դէպի Արմ. մուտքը ուր հանդիպեցաւ երկրորդ վատին ընդդիմութեան, որուն պատասխանեց առաջնոյն պէս միեւնոյն հաստատակամութեամբ, ստահակը, որ զինուած էր Հար...ով մը, ուժգին հարուած մը տուաւ անոր ձախ քունքին (այստեղ Յ. Մ. վ. ը Հար...ով կը դպի թեկիւն Զ... Բուն...ին) որ տասպալեց զայն աջ ծունկին վրայ, (Այստեղ թեկիւն կ'իյնայ իր ա... ծ...ին վրայ): Մեր վ...ը տեսնելով թէ այս երկու կէտերէն իւր անցքը կտրուած է, դողդոջուն, նուաղուն եւ արիւնթաթաւ յառաջացաւ դէպի Ար. դուռը ուր դարանակալ կ'սպասէր երրորդ վատը: Ան ալ միեւնոյն պատասխանը ստացաւ իր անպատկառ պահանջումին, որովհետեւ նոյն իսկ այս ճգնաժամային պահուն մեր վ...ը մնաց հաստատակամ եւ անվրդով: Ստահակը, որ զինուած էր ծանր մուրճով մը, հաւուր հարուած մը իջեցուց անոր ճակտին (այստեղ Գ. վ. ը կը դպի Մ...ով թեկիւն Չ...ին) փռելով զայն անկենդան՝ դետնի վրայ (որուն նմանութիւնը կ'ընէ թեկիւն):

Հանդիսաւոր նուագ մը կամ երգ մը կրնայ տեղի ունենալ, նոյնպէս նառախօսութիւն մը որ բնաբան կ'առնէ Բանֆ ժողովողին (եկդեսիաստէս) Գլուխ ԺԲ. Համար 1-7:

Երկու վ. ներք կը կենան թեկիւն ետեւը պատրաստ Գ. վ. ին հրամաններուն:

Եղբայրները պարտին նկատի առնել թէ, սոյն այս արարողութեան ընթացքին ինչպէս եւ իւր ներկայ կայութեան մէջ, մեր Եղբ. կը մարմնաւորէ ամենաազնիւ նկարագիրներէն մին զոր երբէք Ա. Ո. եան տարեգրութիւնները արձանագրած ըլլան, այսինքն՝ Հ. Ա., որ իր կեանքը զոհեց իրեն վստահուած նուիրական աւանդին հանդէպ ունեցած անայլայլ հաւատարմութեանը համար: Կը յուսամ թէ այս պարագան անջնջելի տպաւորութիւն մը պիտի ընէ իր եւ մեր մտքերուն վրայ, եթէ երբեք գտնուէինք համանման փորձութեան պարագայի մը մէջ:

Գ. վ. — Եղբայրներ՛ր, հիմա պիտի կարկինենք մեր վ...ին Հ. Ա. ի ներկայացուցիչը Ն. Ա. Ո. ի ն...ով (այս կը կատարուի):

Երգել Սաղմոսի սուաքին Համարը:

Գ. վ. — Յ. Կ. վ., դուք պիտի ջանաք վեր առնել մեր վ...ը ներկայացնող Եղբ. Ն. Ա. Ո. ի շօշ...ով (ինչ որ կը կատարէ, եւ կը տեղեկացնէ Գ. վ. ին պատ...ի ն...ը տալով):

Յ. Կ. վ. — Կը սահի, Գ. վ.:

Գ. վ. — Եղբայրներ՛ր, հիմա պիտի կարկինենք մեր վ...ին Հ. Ա. ի ներկայացուցիչը Ը. Ա. Ո. ի Աղ...ի ն...ովը (այս կը կատարուի):

Երգել Սաղմոսի երկրորդ Համարը:

Գ. վ. — Յ. Մ. վ., դուք պիտի ջանաք վեր առնել մեր վ...ը ներկայացնող Եղբ. Ը. Ա. Ո. ի շօշ...ով (ինչ որ կը կատարէ, եւ կը տեղեկացնէ Գ. վ. ին պատ...ի ն...ը տալով):

Յ. Մ. վ. — Նոյնպէս կը սահի, Գ. վ.:

Գ. վ. — Եղբայրներ՛ր, հիմա պիտի կարկինենք մեր

Վ...ը ներկայացնող Եղբւր Վ. Ո.ի մը Ողջ...ի մեծ ն...ովը:

Երգել Սաղմոսի Երրորդ Համարը:

Գ. Վ. — Յի. Վ. նե'ր, գուք երկուքդ ալ ձեր ձեռնարկ-նեքուն մէջ՝ անյաջող դանդաղացաք, կը մնայ տակաւին երրորդ եղանակ մը այն է՝ Վ. Ո.ի մը զօրաւոր կամ առիւծի ճանկը որ կը կայանայ ձեռքի շատ աւելի ուժեղ սեղմումի մը մէջ, վերցնելով զայն ընկերակցութեան հ... կ...ն վրայ: Պիտի փորձեմ կատարել զայն ձեր օժանդակութեամբը: (Վեր կ'առնէ Թեկ.ն Ընկերակցութեան հ... կ...ն վրայ):

Ան...ի կ...ք կը քակուի:

Գ. Վ. (Թեկ.ն կեցնելով իր աջ կողմը) — Ահա, այսպէս, Եղբւրյոս, բոլոր Վ. Ո.ները ոտքի կ'ենեն ձեռացած մահէ մը, որպէս զի կարենան կրկին միանալ աշխատութեան իրենց նախկին ընկերներուն: (Յ. Վ.ները իրենց տեղերը կը վերադառնան Գ. Վ.ին հրաւերիմ վրայ):

Երգել Սաղմոսի Զորրորդ Համարը:

Գ. Վ. (Տակաւին ոտքի կեցած կը շարունակէ). — Թոյլ տուէք ինձ հիմա դիտել տալ ձեզ թէ Վ. Ո.ի մը լոյսը ուրիշ բան է բայց եթէ տեսանելի մթութիւն մը որ կը ծառայէ միայն երեւան բերել այն աղջամուղջը որ կը ծանրանայ ասպղայի հեռապատկերին վրայ: Ահա այդ մթութեան խորհրդաւոր վարպետըն է որ մարդկային տրամաբանութեան աչքը չի կրնար թափանցել, եթէ վերէն եկող լոյսը զօրավիգ չըլլայ իրեն, այսուհանդերձ այդ տկար ճառագայթովն իսկ պիտի կարենաք տեսնել թէ Գ...ին ճիշդ եղբր կը գտնուիք, որուն մէջ իջած էիք քիչ առաջ այլարանօրէն, եւ թէ երբ այս կեանքի վաղանցուկ շրջանը աւարտի, պիտի ընդունի զձեզ կրկին իր ցուրտ ծոցին մէջ: Մահուան խորհրդանշանները որոնք կը գտնուին ձեր առջեւը, թո'դ առաջնորդեն ձեզի խորհրդածելու ձեր անխուսափելի ճակատագրին վրայ եւ ուղղեցոյց ըլլան ձեզի մարդկային բոլոր ուսումնասիրութեանց ամենէն շահեկանին, որն է ձեր իսկ անձին ծանօթութիւնը: Խնամօք մտադիր եղէք կատար-

րելու ձեզ վիճակուած աշխատութիւնը երբ դեռ ցորեկ է, որովհետեւ երբ դիշերը դայ այլեւս ոչ ոք կրնայ աշխատիլ: Շարունակեցէ՛ք մտիկ ընել Բնութեան ձայնը, որ կը վկայէ թէ նոյն իսկ այս անցաւոր կեանքին մէջ գոյութիւն ունի կենսական ու անմահ սկզբունք մը որ կը ներշնչէ սուրբ վստահութիւն մը թէ Կենաց Տէրը կարող պիտի ընէ ձեզի արհամարհել արհաւիրքներու թագաւորը եւ բարձրացնել ձեր աչքերը այն լուսասփիռ Առաւօտեան Աստղին (առ...ք կը վ...ի) որուն երեւումը կը բերէ խաղաղութիւն եւ փրկութիւն մարդկային ցեղին հաւատարմներուն եւ հնազանդներուն:

Գ. Վ. (Կը շարունակէ). — Ձեր ուշադիր մտադրութիւնը ուրիշ կերպով չեմ կրնար վարձատրել բայց եթէ անմիջապէս վստահելով ձեզի այս Աստիճանին Գաղտնիքները: Ուրեմն դուք պէտք է յառաջանաք դէպի ինձ՝ նախ իբր Ն. Ա. Ո. մը, եւ յետոյ իբր Ը. Ա. Ո. մը: (Թեկ.ն օրինաւոր ք...ը կ'առնէ): Դուք առէք հիմա ուրիշ կարճ քայլ մը եւս ձեր ձ... ո...ով, միացուցէք ա... ո...ին կ...ը ձ...ին խ... մէջ, ինչպէս նախապէս ըրիք: Այս՝ Երրորդ կանոնաւոր քայլն է Ա. Ո.եան մէջ, եւ այդ դիրքին մէջ է որ այս Աստիճանին Գաղտնիքները կը հաղորդուին, ատոնք կը բաղկանան ն...է, շօշ...է եւ ք...է: Ն...երուն առաջինը եւ երկրորդը Պատահական են, երրորդը պատժոյ: Պատահական ն...ին առաջինը կը կաղմուի Ը. Ա. Ո.ի ն...էն, եւ կը կոչուի Նդ... Ս...ի (կենալ իբր Ը. Ա. Ո.), այս ն...ը կը տրուի այսպէս...: Երկրորդ պատահական ն... է՝ ն...ա վշ...ի կամ ն... համ...եան, եւ կը տրուի այսպէս...: Երրորդը, կամ Պատժոյ ն...ը, կը տրուի...: Այս ն...ը կ'ակնարկէ ձեր յանձն առած պատիժին, որով իբր պատուոյ տէր անհատ մը եւ իբր Վ. Ո. մը դուք կը նախընտրէք... եւն., քան անտեղի կերպով հրապարակել այս Աստիճանին Գաղտնիքները: Շօշ...ը Ընկերակցութեան առաջին հինգ կէտերն են, այսինքն, ձ... ձ...ի, ո... ո...ի, ծ... ծ...ի, ձ... կ...՝ ձ... կ...ի, եւ ծ... ձ...ը ու...ին վրայ Չու... ձ...ի, կը բարեւեմ ձեզի իբր Եղբւր մը, ո... ո...ի, թէ պիտի օգնեմ բոլոր

ձեր օրինաւոր ձեռնարկներուն մէջ: Ծ... Ծ...ի, թէ իմ ամէնօրեայ աղօթքներուն մէջ պիտի յիշեմ բոլոր ձեր կարեւորները եւ թէ սիրտս հակամէտ պիտի ըլլայ օգնելու ձեր պէտքերուն: Զ... Կ... , Դ... Կ...ի՝ թէ իմ Կ...ս պիտի ըլլայ ապահով եւ սրբազան վայր մը բոլոր ձեր օրինաւոր գաղտնիքներուն երբ անոնք ինծի յանձնուած են. եւ Ծ... Դ...ը ու...ին վրայ, թէ պիտի պաշտպանեմ ձեզի ինչպէս ձեր բացակայութեան նոյնպէս եւ ձեր ներկայութեան ժամանակ:

Ուրեմն, միմիայն այս գիրքին մէջ եւ ան ալ փափսալով միայն, ի բաց առեալ բաց Օ.ի մէջ, կը տրուի այս Աստիճանին բ...ը: Այդ բ...ը են... Գուք հիմա ազատ էք երթալու հաղուելու եւ հանդստանալու եւ երբ վերադառնաք Օ., ձեզ պիտի բացատրուին աւելի մանրամասնօրէն այս ն...երուն, շօշ...րուն եւ բ...րուն նշանակութիւնները եւ արարողութիւնը պիտի շարուհարուի:

Ա. Ս.ը Թեկ.ն կը կեցնէ Օ.ին մէջտեղը եւ կը հրահանգէ գայն բարեւել Գ. Վ.ը եւ Վ.ները երբորդ Աստիճանաւ: Յետոյ կ'առաջնորդէ գայն մինչեւ Օ.ին դուռը:

Երբ Թեկ.ն կը վերադառնայ Օ. կը բարեւէ Գ. Վ.ը եւ Վ.ները երբեք Աստիճաններով, յետոյ Յ. Մ. Վ.ը ոտքի կ'ելնէ պ...ի նշ...ը եւ կը ներկայացնէ Թեկ.ն Գ. Վ.ին, հետեւեալ կերպով:

Յ. Մ. Վ. — Գ. Վ., ձեզ կը ներկայացնեմ Եղբ. Ա. Բ., որ բարձրացած է Վ. Ո.ի վսեմ Աստիճանին եւ կը խնդրէ ձեր աւելի շնորհաց արժանանալ:

Գ. Վ. — Յ. Մ. Վ., ձեզ կը յանձնարարեմ իրեն տալու Վ. Ո. մը յատկանշող Գրաւականը:

Յ. Մ. Վ. — Եղբ. Ա. Բ., Գ. Վ.ին հրամանաւ, ձեզ կը յանձնեմ Վ. Ո.ի մը որոշիչ Գրաւականը (կը կապէ անոր վրայ) ցուցնելու համար Գիտութեան մէջ ձեր կատարած յառաջդիմութիւնները:

Գ. Վ. — Ես ալ պէտք է աւելցնեմ թէ այն Գրաւականը որ տրուեցաւ ձեզ հիմա, չի ցուցներ միայն ձեր Աստիճանը իբր Գ. Ո., այլ նպատակ ունի նաեւ ձեզ յիշե-


ցընելու այն մեծ պարտականութիւնները որոնք այնքան հանդիսաւորապէս ստանձնեցիք կատարել, եւ մինչ ան կը ցուցնէ ձեր վերադասութիւնը, պարտք կը դնէ նաեւ ձեր վրայ օգնել եւ ուսուցանել, աւելի վար Աստիճաններու մէջ գտնուող ձեր Եղբայրները:

Ս.ները Թեկ.ն կը կեցնեն Գ. Վ.ին առաջը:

Գ. Վ. — Մենք մեր աւանդական պատմութիւնը ընդհատեցինք մեր Վ.ին՝ Հ. Ա.ի մահը պատմելէ վերջ: Այսքան կարեւոր կորուստ մը, որպիսին էր գլխաւոր ճարտարապետինը, չպիտի անցնէր անշմար եւ արդարեւ ամէն կողմ լրջօրէն յուզում պատճառեց: Իր յատակագծերուն եւ հրահանգներուն բացակայութիւնը որ մինչեւ այն ատեն կանոնաւորապէս կը բաշխուէին աշխատութեան զանազան ճիւղերուն, առաջին նշանը եղաւ թէ մեր Վ.ին մեծ դժբախտութիւն մը պատահած էր: Մենախիմները կամ Կառավարիչները, կամ աւելի հասարակ բառով Աշխատութեան Վերահսկիչները, իրենց ընկերներուն ամէնէն բարձրաստիճաններէն մէկ քանին ընտրեցին իբր պատգամաւոր եւ ղրկեցին Ս... Թ...ին, բացատրելու համար իրեն այն ծայրայեղ շփոթութիւնը որու մատնուած էին Հ.ի բացակայութիւնովը: Անոնք Ս... Թ...ին հաղորդեցին իրենց վախը թէ իր անակընդալ եւ խորհրդաւոր անհետացումը պէտք էր վերագրել սոսկալի աղէտի մը: Ս... Թ... անմիջապէս հրամայեց զանազան բաժանումներու պատկանող բոլոր դործաւորներուն ընդհանուր կոչ մը ուղղել: Վերոյիշեալ վերհասկողներու զասակարգէն երեք անգամներ չպատասխանեցին կոչին: Նոյն օրը տասն եւ երկու Ընկերներ, որոնք զաւարտութեան սկիզբը միացած էին, Թ.ին ներկայանալով, ինքնաբերաբար խոստովանեցան բոլոր եղելութիւնները մինչեւ այն վայրկեանը ուր դադարած էին մաս կազմելէ զաւարտիչներու խումբին: Իր երկիւղները տալաւ հաստատութիւն գտնելով գլխաւոր Արուեստագէտին ապահովութեան մասին՝ Թ...ը տասն եւ հինգ վստահելի Ընկերներ ընտրեց եւ հրամայեց անոնց երթալ մանրակրկիտ խուզարկութիւններ ընել մեր Վարպետին՝ Հ. Ա.ի անձի մասին, տեսնելու համար թէ

տակաւին ողջ էր ան եւ կամ թէ բարձրագոյն Աստիճանի դադանիքները իրմէ կորդելու պայքարին զոհ գացած էր: Հետեւապէս իրենց Նրուսադէմ վերադարձին համար սրտը օր մը նշանակելով, Ը. Ա. Ռ. ներու երեք Օ. ներ կազմեցին իրենց մէջ, եւ մեկնեցան Տաճարին երեք դուռներէն: Շատ սպարդիւն փնտռութեանով օրեր անցան, նոյն իսկ Օթեակներէն մին վերադարձաւ Նրուսադէմ առանց որ եւ է կարելոր բան մը երեւան հասնելու: Բայց երկրորդ Օթեակը աւելի բախտաւոր եղաւ, որովհետեւ երեկոյ մը, ամենամեծ յոգնութիւններէ եւ զըրկանքներէ վերջ, Նյրալներէն մին որ հողին վրայ երկընցած էր հանդստանալու, վեր ելնելու համար ուղեց օդաուիլ՝ մօտը դռնուած թուփի մը ճիւղէն, բայց սրբան մեծ եղաւ իր զարմանքը երբ թուփը տեղի տուաւ, դիւրաւ մը հողէն դուրս ելնելով: Ուշագիւր քննութիւնէ մը վերջ նշմարեց որ հողը դեռ նոր խառնուած էր, ուստի անմիջապէս կանչեց իր Ընկերները եւ իրենց միացած ջանքերով յաջողեցան վերաբանալ, եւ հոն գտան մարմինը մեր Վ. ին՝ շատ անպատշաճօրէն թաղուած: Անոնք ամենամեծ յարգանքով եւ ակնածութեամբ դոցեցին կրկին դոյն, եւ նշանակելու համար տեղը՝ տնկեցին Արասիաի ճիւղ մը Գ...ին գլխուն վրայ. յետոյ անոնք աճապարեցին դառնալ Նրուսադէմ, Ս... Թ...ին հաղորդելու համար տխուր լուրը: Ս... Թ..., իր վըշտին առաջին թափը անցնելէ վերջ, հրաման բրաւ անոնց վերադառնալ գէպի գերեզմանը, վերցնել մեր Վ. ին մարմինը եւ պատուել դոյն իր բարձր գիրքին եւ մեծ տաղանդին պատշաճ գերեզմանով մը, միեւնոյն առան հաղորդեց անոնց որ անոր անժամանակ մահովը կը կորսուէին Վ. Ռ. ի մը խկական Գ...ները, այդ պատճառաւ անոնց յանձնարարեց մասնաւոր ուշագիւր բլլալ եւ գիտել վերջիչելու համար բոլոր այն պատահականներ, օջո...ը, կամ բ...ը, որոնք կրնային դիպուածաբար փոխանակուիլ անոնց մինչեւ այն պահուն՝ երբ վերջին տխուր պարտականութիւնները պիտի կատարուէին այն արժանիքի տէր մարդուն՝ որ ոչ եւս էր: Անոնք ամենամեծ հաւատարմութեամբ կատարեցին ի-

(Փոքրիկ)
Օրհնագան ազգերու պատկանդ Ա. Ռաֆայելիներ



րենց պարտականութիւնը: Երբոր փոսը կրկին բացուե-
 ցաւ՝ Եղբայրներէն մին, որ իր շուրջը կը նայէր, դի-
 տեց որ իր ընկերներէն մէկ քանին կը գտնուէին սա
 զիւրքին մէջ... սոսկումի արտայայտութիւններով ցա-
 ւալի տեսարանին առջեւ, եւ ուրիշներ, դիտելով անոր
 սարսափելի վէրքը, տակաւին տեսանելի անոր ճակատին
 վրայ, իրենց ցաւը կը յայտնէին զարնելով իրենց ճակ-
 տին վրայ աշպէս... իբր համակրան նշան մը իւր տա-
 սապանքին: Այն ատեն, Եղբայրներէն երկուքը, իջան
 Գ...ին մէջ եւ անոնցմէ մին փորձեց վերցնել մեր Վ.ը
 Ն. Ա. Ո.ի շօշ...ովը, որ սակայն սահեցաւ, միւսը
 ջանաց վերցնել Բ. Ա. Ո.ի շօշ...ովը որ նոյնպէս սա-
 հեցաւ, երկուքն իրենց ձեռնարկին մէջ յաջողած չըլ-
 լալով, աւելի եռանդոտ եւ փորձառու Եղբայր մը, իջ-
 նալով՝ Վ. Ո.ի մը զօրաւոր կամ առիւծի ճանկով, եւ
 միւս երկուքին օժանդակութեամբ վեր բարձրացուց
 զայն Բնկ...եան Հի... Կէ...ուն վրայ, մինչ միւսները
 ալ աւելի խանդավառուած կոչեցին... կամ... Այս եր-
 կու բառերը գրեթէ նոյն իմաստը ունին, մին կը նշա-
 նակէ..., միւսը...: Ս... Թ... հրամայեց որ այս պա-
 տահական ն...ները շօշ...ը եւ ր...ը պէտք է յատկո-
 րոշեն բոլոր Վ. Ո.ները Տիեզերքի վրայ մինչեւ որ ժա-
 մանակները կամ պարազանները թոյլ տան վերահաստա-
 տելու խկականները: Կը մնայ միայն խօսիլ երբորդ
 Օթեակի մասին: Անոնք իրենց խուզարկութիւնները յա-
 ուջ տարած էին Յոպպէի ուղղութեամբ եւ կը խորհէին
 Երուսաղէմ վերադառնալ, երբ զիպուածաբար քարան-
 ցաւի մը առջեւէն անցած ատենին լսեցին խորունկ հե-
 ծեծանքներու եւ վշտի ձայներ, ու երբ պատճառը հաս-
 կընալու համար ներս մտան, հոն գտան երեք անձեր
 որոնք կը համապատասխանէին պակսողներուն զիմա-
 գըծերուն նկարագրութեան: Անոնք իբր գործուած
 սպաննութեան հեղինակները ամբաստանուելով եւ փա-
 խուստի ամէն հաւանականութիւն իրենց համար անկա-
 րելի նկատելով, ոճիրին կատարեալ խոստովանութիւնը
 րին: Կապուելով տարուեցան Երուսաղէմ, ուր Ս...
 Թ... դատապարտեց զանոնք այն մահուան՝ որուն ար-

Ժանացած էին իրենց ատելավառ ոճիրովը:

Հրամայուեցաւ մեր Վ.ին մարմինը թաղել Սրբութիւն Սրբոցին ա'յնքան մօտը որքան Իսրայէլացւոց օրէնքները կը թոյլատրէին: Հոն Գ... մը փորուեցաւ կեղորոնէն երեք ոտք Ար... , երեք ոտք Արմ... , երեք ոտք Հս...ին եւ Հր...ին մէջտեղ, եւ հինգ ոտք կամ աւելի խորութեամբ: Կարելի չեղաւ Սրբութիւն Սրբոցին մէջ թաղել զինքը, որովհետեւ ոչինչ հասարակ կամ անմաքուր պէտք չէր մոռտ գործէր հոն, ո'չ իսկ Մեծ Քահանայապետը, որ բացառաբար տարին մէկ անգամ, Քառութեան մեծ օրը, կը մտնէր կրկնակի լուացումներէ եւ մաքրագործումներէ վերջ, որովհետեւ Իսրայէլացւոց օրէնքներուն համեմատ բոլոր մեռած մարմինները կը նկատուէին անմաքուր: Նոյն այն տասն եւ հինգ Ը. Ո.ները հրաման ստացան ներկայ ըլլալու յուղարկաւորութեան, հազուած ճերմակ գոգնոցներով եւ ձեռնոցներով, իբր խորհրդանշան իրենց անմեղութեան:

Չեզի բացատրուեցաւ արդէն այս Աստիճանին երեք ն...ը, ամբողջութիւնը հինգ է, որ կը համապատասխանէ Ընկ...եան հի... կէ...ն: Ատոնք են ն... ս...ի, ն... հ...եան, ն... պ...ի, ն... վ...ի եւ ա...եան, եւ հինգերորդը՝ ն... ուր...եան եւ խան...եան, որ կը կոչուի նաեւ Մե... եւ Ար... ն...: Կանոնաւորութեան համար, ամբողջութեամբ պիտի կրկնեմ զանոնք: Այս, ... ն... է ս...ի: Այս, ն... է հ...եան: Այս, ն... է պ...ի: Վ...ի եւ ա...եան ն...ը կը տրուի այդպէս... Այս ն...ը իր ծաղումը առած է հետեւեալ պարագայէն երբ մեր Վ...ը Տաճարին Հս... մուտքէն դէպի Ար... մուտքը կը յառաջանար իր անձկութիւնը այնքան մեծ էր որ քրտինքի խոշոր կաթիլներ կը կենային իր ճակտին վրայ, այնպէս որ այս ն...ը ըրաւ իր ցաւերը առժամապէս ամոքելու համար: Այս, ... ն... է ուր... եւ խան...եան: Այս ն...ը ծագում առած է երբ, Տաճարին շինութիւնը աւարտած, Ս... Թ..., իւր Տանը իշխաններուն հետ միասին զնաց զայն դիտելու, անոր փառայել տեսքը այն աստիճան խոր աղբեցութիւն գործեց անոնց վրայ որ ամէնքը միաժամանակ հիացիկ յու-

ղումով մը գոչեցին. «Ո՛վ մեծաքանչ Ո...ներ»:

Սկովտիոյ, Իրլանտայի եւ Ամերիկայի մէջ վ...ի եւ ա...եան ն...ը կը տրուի այսպէս... գոչելով...: Անգլիոյ մէջ տարբեր կերպով կը տրուի, այսպէս...: Մինչդեռ ցամաքային Եւրոպայի մէջ ալ աւելի տարբեր կերպով կը տրուի, այսպէս... կոչելով այն երկրին լեզուով ուր կը գտնուիք, այն ենթադրութեամբ թէ բոլոր Վ. Ո.ները Եղբայներ են Հ... Ա...ի, որ Նազ...ի ցեղէն ա...ի մը զ...ն էր:

Հիմա ձեզի պիտի ներկայացնեմ Վ. Ո.ի մը աշխատութեան գործիքները որոնք են. Պար...ը, Մատ...ը եւ Կար...ը: Պար...ը գործիք մըն է որ կեղորոնական առանցքի մը վրայ կը գործէ, ուրկէ քաշուած է զիծ մը, գծուած ու քանդակուած, որոշելու համար այն տեղը ուր ծրագրուած հիմնարկութիւնը պիտի կատարուի: Մատ...ովը, փորձառու արուեստագէտ մը, կը նկարէ կամ կը պատրաստէ չէնքի մը յատակագիծը որ իբր ուղեցոյց եւ օրինակ կը ծառայէ գործաւորին: Կար...ը կարող կ'ընէ զինքը չափելու, հաշուելու եւ ճշդելու հիմնարկութեան զանազան մասերուն սահմանը եւ տարածութիւնը:

Բայց, որովհետեւ մենք հասարակ արհեստաւորներ չենք այլ Ազատ, Ընդունուած կամ Գաղափարային Որմնադիրներ, մենք այս գործիքները կ'առնենք իրենց բարոյական իմաստովը: Այսպէս պար...ը մեզ կը ցուցնէ անաշտայելի եւ ուղիղ դնացքը որ մեզ կ'ուսուցանէ Ն. Օ. Մ.ը. Մատ...ը մեզ կը սորվեցնէ թէ մեր խօսքերը եւ գործքերը կը դիտուին եւ կ'արձանագրուին Ամենահզօր ճարտարապետին կողմանէ, որուն պարտաւոր ենք տալ մեր կեանքին հաշիւը. Կար...ը կը յիշեցնէ մեզ Իր անաշտ եւ ուղղադատ արդարութիւնը, որ մեր գիտութեան համար նախագծած ըլլալով բարիին եւ չարին սահմանները, մեզ պիտի վարձատրէ կամ պատժէ, իւր Աստուածային հրամաններուն հնազանդած կամ անսատած ըլլալնու համաձայն: Այսպէս, Վ. Ո.ի մը աշխատութեան գործիքները մեզ կը սորվեցնեն միշտ մտքի առջեւ ունենալ եւ գործել Երկնային Ստեղծագործին

Օրէնքներուն համեմատ, որպէս զի երբ ժամը հնչէ մեկ-
նելու այս երկրային բնակավայրէն, կարենանք բարձ-
րանալ այն վերին Մեծազոյն Օթեակը ուր աշխարհի
Մեծ Ճարտարապետը կը բնակի եւ կ'իշխէ յաւիտեան:
Վ Ե Ր Զ

ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ



ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ ԲԱՐՁՐԱՅՈՒՄԷՆ ՎԵՐՁ

Եղբայր, Ա. Ռ. եան հիմնարկութեան համար ձեր ե-
ռանդը, յառաջդիմութիւնը որ ձեռք բերիք Արուեստին
մէջ եւ ձեր համակերպութիւնը ընդհանուր կանոնա-
դրութիւններուն, ձեզ ենթակայ կ'ընեն մեր հոգածու-
թեան եւ համարումին:

Վ. Ռ. ձեր դիրքով ասկէ վերջ արտօնուած էք ուղ-
ղելու ձեր Եղբայրներուն եւ Ընկերներուն սխալներն ու
անկանոնութիւնները եւ զգուշացնելու զիրենք անհաւա-
տարմական որ եւ է արարքի դէմ, ձեր յարածամ հոգը
ու մտադրութիւնը պիտի ըլլայ զարգացնել բարոյականը
եւ ուղղել ապրելակերպը մարդկային ընկերութեան:
Այս տեսակէտով հետեւաբար, դուք միշտ պիտի յանձ-
նարարէք ստորադասներուն հպատակութիւն եւ հնազան-
դութիւն. հաւասարներուն կենցաղագիտութիւն եւ մար-
դասիրութիւն, իսկ բարձրաստիճաններուն՝ բարութիւն
եւ հաճոյակատարութիւն: Ձեր մէջ պէտք է հաստատուի
Տիեզերական բարեգործութեան զգացումը. եւ ձեր իսկ
վարմունքի կանոնաւորութեամբ լաւազոյն օրինակը հան-
դիսանաք ուրիշներու վարմունքին: Մեր Կարգին հնա-
դոյն սահմանիչերը որ ձեր հոգածութեան յանձնուած
են, պարտաւոր էք պահպանել իբր նուիրական եւ ան-
բռնարարելի եւ երբեք չի հանդուրժել որ մեր ծէսերը
բռնարարուին կամ հաստատուած սովորութիւնները եւ
կարգերը որ եւ է կերպով փոխուին:

Պարտականութիւն, պատիւ եւ երախտագիտութիւն կը

պարտադրեն ձեզ հիմա հաւատարիմ մնալ ամէն վըս-
տահուած աւանդի, կրել պարտաճանաչ արժանապատ-
ուութեամբ ձեր նոր կոչումը, եւ զօրացնել սկզբունքով
եւ օրինակով մեր դրութեան կարգերը: Թո՛ղ որ եւ է
շարժառիթ չը թերացնէ ձեզի ձեր պարտականութեանց
կիրարկման մէջ, դրժել չը տայ ձեր ուխտերը, կամ
մատնէ՛ ձեր վստահութիւնը, այլ պէտք է ըլլաք միշտ
ճշմարտախօս եւ հաւատարիմ, եւ նմանիք այն նշանաւոր
Արուեստագէտին օրինակին որ պատկերացուցիք դուք
այս երեկոյ: Այդ օրինակելի վարմունքովը դուք պիտի
համոզէք աշխարհը թէ՛ արժանիքը եղած է ձեր տիւտ-
ղոսը մտնելու մեր առանձնաշնորհմանց մէջ եւ թէ ա-
ռանց արժանիքի չէ որ ձեր վրայ հաստատուած են մեր
շնորհները եւ հոգածութիւնը:

ՎԵՐՁ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆ



ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԳԾԱՏԱԽՏԱԿԻ
ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վ. Ռ. թ. Օ. ի մը զարգարանքն են Սրբամուտը, Լուսա-
մուտը եւ Քառակուսի Անկիւնաւոր Յատակը: Սր...ը
Սրբութիւն Սրբոցին մուտքն էր, Լուս...ը նոյն Սրբա-
վայրը լուսաւորող պատուհանն եւ Ք... Ա... Յ...ին վրայ
կը քալէր Մեծ Քահանայապետը: Մեծ Քահանայապե-
տը պաշտօն ունէր խունկ վառելու ի փառս եւ ի պատիւ
Բարձրելոյն, եւ աղօթել ջերմեռանդօրէն Ամենակարո-
ղին՝ որպէս զի իւր անսահման բարութեամբ եւ իմաս-
տութեամբը բարեհաճէր խաղաղութիւն եւ անդորրու-
թիւն պարգեւել Իսրայէլի ժողովրդեան յառաջիկայ
տարուան համար: Մեր Վ. ը՝ Հ. ը սպաննող գործիքներն
էին (ինչպէս քիչ առաջ ձեզի ըսի) Ուղ...ը, հար...ը
եւ մուրճը: Դ...ը, Գ...ը, մահուան խորհրդանշաններն
են որ կ'ակնարկեն մեր Վ. ին անժամանակ մահուան որ

տեղի ունեցաւ աշխարհի ստեղծագործումէն 3000 տարի
վերջ:

Վ Ե Ր Զ

ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ
ԳԾԱՏԱԽՏԱԿԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ



ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՕԹԵԱԿԻ
ՓԱԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Գ. Վ. — Եղբայրնե՛ր, օգնեցէք ինձ որ փակեմ Օ.ը
Երրորդ Աստիճանաւ (ամէնքը ոտքի կ'ելնեն):

Գ. Վ. — Յ. ս. Վ., ի՞նչ պարտի ըլլալ յարատեւ հո-
գածութիւնը ի մի հաւաքուած Վ. Ո.ներու:

Յ. Կ. Վ. — Հաստատել թէ Օ.ը օրինաւորապէս գոց է:

Գ. Վ. — Կատարել տուէք այդ պարտականութիւնը:

Յ. Կ. Վ. (Ն. Պ.ին) — Հաստատեցէք թէ Օ.ը օրի-
նաւորապէս գոց է:

Ն. Պ.ը կուտայ հ... որոնց կը պատասխանէ Ա.

Դ.ը, քայլը կ'առնէ եւ Երրորդ Ապտիմանի պա...ի
նշանը տալով

Ն. Պ. — Յ. Կ. Վ., Օ.ը օրինաւորապէս գոց է:

Յ. Կ. Վ. — Գ. Վ., Օ.ը օրինաւորապէս գոց է:

Գ. Վ. — Յ. Մ. Վ., ո՞րն է երկրորդ պարտականու-
թիւնը:

Յ. Մ. Վ. — Տեսնել թէ Եղբայրները պատրաստ են
կենալու ի կարգ իբր Վ. Ո.ներ:

Գ. Վ. — Ի կարգ, Եղբայրներ, Երրորդ Աստիճանով:
Եղբայրները քայլը կ'առնեն եւ կուտան պա...ի
ն...ը:

Գ. Վ. — Յ. Կ. Վ. — Ուրկի՞ց կուգաք:

Յ. Կ. Վ. — Արմէն, ուր գացինք ի խնդիր Վ. Ո.ի
մը իսկական Գաղտնիքներուն:

Գ. Վ. — Յ. Մ. Վ., յաջողեցա՞ք ձեր խուզարկու-
թեանց մէջ:

Յ. Մ. Վ. — Ո՛չ, Գ. Վ., բայց անոր տեղ կը բերենք

մեզի հետ առժամանակեայ կարգ մը գաղտնիքներ, զոր
կը փափաքինք ենթարկել ձեր հաւանութեան:

Գ. Վ. — Այն ատն հաղորդեցէք ինձ օրինաւորապէս
այդ առժամանակեայ գաղտնիքները:

Երկու Վ.ները Օ.նե կեդրոնը կուգան եւ կը կե-
նան իրարու դէմ առ դէմ, Յ. Մ. Վ.ին դէմքը՝ դէ-
պի Հարաւ եւ Յ. Կ. Վ.ինը՝ դէպի Հիւսիս: Յ. Կ.
Վ.ը՝ Վ. Ո.ի մը առժամանակեայ գաղտնիքները կը
հաղորդէ, Յ. Մ. Վ.ը կը պահէ իր դիրքը, առաջին
քայլէն վերջ, Յ. Կ. Վ.ը կը բռնէ Յ. Մ. Վ.ին ձեռ-
քը եւ կուտայ Վ. Ո. Մուտքի Ծօշ...ը եւ ձեռքերը
գլխին բարձրութեամ տանելով անոր աջ ականջէն
կը հաղորդէ փսփսալով անձ...ը, ձեռքերը վար իջե-
ցնելէ վերջ կ'առնէ ուրիշ քայլ մը, եւ կուտայ ամ-
բողջ նշանները Վ. Ո.ի մը, եւ ընկ. հի... կէ...ն
վրայ անոր ձախ ականջին կը փսփսայ Վ. Ո.ի մը
բառերը, եւ Յ. Մ. Վ.ը յառաջանալով դէպի Գ.
Վ.ը կուտայ պա...ն...ը:

Յ. Մ. Վ. — Գ. Վ., շնորհ ջրէք ստանալու առժա-
մանակեայ գաղտնիքները Վ. Ո.ի մը:

Գ. Վ. — Յ. Մ. Վ., հաճոյքով պիտի ստանամ զա-
նոնք, եւ այս առթիւ հրահանգելու համար Եղբայրնե-
րը, կ'արտօնեմ ձեզ բառերը արտասանել բարձրաձայն:

Գ. Վ.ը կը բողոք Աթոքը (այց կողմէն) եւ կ'ըն-
դունի զանոնք Յ. Մ. Վ.էն, այն ատեն Յ. Մ. Վ.ը
կը բարեւէ Գ. Վ.ը եւ կը դառնայ իր տեղը պահե-
լով պա...ն...ը մինչեւ որ իր տեղը կը հասնի:
Գ. Վ.ը կը վերագրաւէ իր Աթոքը եւ խօսքը Օ.ին
ուղղելով:

Գ. Վ. — Եղբայրնե՛ր, այսպէս Վ. Ո.ի մը առժամա-
նակեայ գաղտնիքները օրինաւորապէս հաղորդուեցան
ինձ: Ես, Վ.ը այս Օ.ին հետեւաբար խոնարհ ներկա-
յացուցիչը Ս... Թ...ին, կը հաւանիմ, կը հաստատեմ
եւ կը յայտարարեմ թէ անոնք, իմ հաւանութեամբ,
պիտի յատկանշեն ձեզ եւ բոլոր Վ. Ո.ները Տիեզերքի
վրայ, մինչեւ որ ժամանակը կամ պարագաները կարե-
նան վերահաստատել իսկական Գ...ները:

300

Գ. Վ. (եւ ամբողջ եղբայրները, Մեծ եւ Արքայական
նշանը տալով)։ — Փա՛ռք եւ պատի՛ւ Բարձրելոյն։

Գ. Վ. — Յ. Մ. Վ., այս Աստիճանին աշխատութիւն-
ները աւարտած ըլլալով, կը յանձնարարեմ փակել Օ.ը
(կուտայ հ...ներ)։

Յ. Մ. Վ. — Եղբայրնե՛ր, յանուն Բարձրելոյն եւ հրա-
ժանաւն Գ. Վ. ին կը կը դադրեցնեմ աշխատանքը եւ կը
փակեմ Օ.ը (կուտայ հ...ներ)։

Ն. Վ. ք կար...իմ մէկ ծայրը կը ծածկէ Անկ...իմ
տակ։

Յ. Կ. Վ. — Եւ ըստ այնմ փակուած է։ (կուտայ հ...-
ները որոնք կը կրկնուին Ն. Պ.էն եւ Ա. Դ.էն)։

Վ. Ե. Բ. Զ.

ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՓԱԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

★

Պատրաստեց՝ Հ. Մ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

14, Av. Albert Sarraut, GOUSSAINVILLE (Seine-et-Oise)

Membre de la Société des Journalistes-Publicistes

Français et de la Presse Etrangère

Stes Savantes - 28, Rue Serpente, Paris-V^e



ՀՀ Ազգային գրադարան



NL0490321

ՅԱՆԿ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ



1. Հին խորհրդաւոր վարդապետութիւններ :
2. Յառաջաբան եւ կարգացոյց սկսնակի :
3. Բացում Օթեակի առաջին աստիճանի :
4. Արարողութիւն նորընծայի ընդունելութեան :
5. Փակում Առաջին Աստիճանի Օթեակի :
6. Բացում Երկրորդ Աստիճանի Օթեակի :
7. Արարողութիւն՝ առաջին աստիճանի որմնադիրի
մը երկրորդ աստիճանի մուտքի համար :
8. Փակում Երկրորդ աստիճանի Օթեակին, եւայլն :
9. Բացում Երկրորդ աստիճանի Օթեակի եւ քննու-
թիւն : ^e
10. Երրորդ աստիճանի անցնելու արարողութիւն
11. Յորդորներ :
12. Յանձնառութիւն :
13. Երրորդ աստիճանի զծառայիտակի բացատրու-
թիւններ : ^e
14. Փակում Օթեակի :

Վերապահուած է՝ մինչեւ իսկ մասնակի արտատպումը
եւ թարգմանութիւնը :



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

— 5 Ն.Ֆ. —

— 1 Տալէր —